

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ

№ 2 ԳԻՏԱ-ԳՈԳՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ. № 2

Ա. Դ. Խ. Ա. Ա. Յ. Ա. Յ.


ԱԱՍՈՒՑԻՑԻ ԴԱՎԻԹ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԵՂ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՑԱՐԱԾՈՐԻ ԿՈՒՐԻ ԳՈՒՐ

ԺԵՆԵՎԵ

1939



ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐԱ

№ 2 ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼԱՐ ՍԵՐԻԱ № 2

891.99.09

Դ-36

Ա. ՊԱՆԱՀԱՆՑԱՆ

ԱՅԱԽՎԲԱ Է 1931

ՍԱՍՈՒՑՑԻ ԴԱՎԻԹ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐ

Դաստիարակություն՝ կարդացված Պետականականի լեկուրիումում
1938 թ. դեկտեմբերի 18-ին:



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐԱ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ձերեկոն

1939

Պատ. խմբագիր՝ Մ. Մկրտչյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարտունյան
Սքըագրիչ՝ Մ. Հանոնադավորյան
Կոնտրոլ սըբագրիչ՝ Վ. Յիսայան

Դրավիտի լիազոր Ն. 2866, պատվեր 493, Տիրաժ 2000
Հանձնվել ե արտադրության 11/VII 1939 թ.

Ստորագրվել ե տպագրելու 13/VII 1939 թ.

3^{2/3} տպ. ճամուղում 38400 տպ. նիշ.

Գետհամալսարանի հրատարակչության տպարան, Յերևան Տերյան 7:

+ 398 (= 91.99)

1.

«Սասունցի Դավիթը» հայ ժողովրդի հնադարյան հարուստ ու գունեղ վիպական բանահյուսության շողշողուն գոհարն ե: Նրա մեջ խտացված ու բյուրեղացիած են հայոց հնագույն դիցաբանական-դյուցազնական առասպեճների ու զրույցների, պատմական վեպերի ու վիպերգների (Հայկ և Բել, Արա Գեղեցիկ և Շամբրամ, Վահագն, Արտավազդ, Արտաշես, Տիգրան...) բովանդակության ու արվեստի լավագույն տարրերն ու տարրերքը:

«Սասունցի Դավիթը» ստեղծել մշակել և սերնդից սերունդ կենդանի խոսքով (բանավոր ավանդությամբ) հեռավոր դարերի խորքից մեր որերն են հասցրել հայ ժողովրդի տաղանդավոր զավակները՝ աշխատավորության ծոցից դուրս յեկած անդրագետ ու անուս գեղջուկ վիպասանները («Նազ ասողներ», «ասացողներ»): «Սասունցի Դավիթի» մեջ նրանք մեծ վոգեվորությունը ու բուռն թափով պատմել են այն հերոսական կոփթաների մասին, զոր մղել են մեր նախնիներն իրենց հայրենիքի անկախությունն ու ազատությունը վոանահարող ստարերկըյա նվաճողների դեմ: «Սասունցի Դավիթի» մեջ նրանք (գեղջուկ վիպասանները) մարմնավորել են ժողովրդի լավագույն հույզերն ու հույսերը, իդձերն ու ցանկությունները և գրսեվորել գեղարվիստական խոսքի մեջը շնորհքն ու վարպետությունը:

Ճիշտ ե, վեպի կենտրոնական գեմքը (Դավիթը), ինչպես նաև բոլոր մյուս գլխավոր հերոսները սասունցիներ են, ճիշտ ե, նրա մեջ յերեան յեկող գեմքերը գործում և դեպքերը կատարվում են Սասունի և սրա հարեան մի քանի զավաների ու շըշակա յերկը լուսների աշխարհագրական վոլորտում, սակայն վեպը շատ հեռու յե միայն Սասունի և սասունցոց վեպ լինելուց: Ծնունդ առնելով պատմական Հայաստանի հիշյալ գավառում, «Սասունցի Դավիթը» չի պարփակվել միայն նրա շրջանակում: Ի՞շ բովանդակությամբ և վողջ եյությամբ հարազատ լինելով ամբողջ աշխատա-

վոր հայ ժողովրդին, վեպը դարերի ընթացքում տարածվել և Հայաստանի համարյա բոլոր շրջաններում գառնալով իսկական համաժողովրդական — համահայկական մի ստեղծագործություն։ Այդ են վկայում վեպի մեր ձեռքի տակ յեղած բազմաթիվ պատումները՝ զրի առնված տարբեր ժամանակ, տարբեր վայրերում, այդ են վկայում հիշյալ պատումների մեջ յեղած լիզվական (բարբառային) տարբերությունները և տեղագրական-աշխարհագրական ու կենցաղային յուրահատուկ կոլորիտը։

* * *

«Սատունցի Դավիթը» մի ծավալուն ու մեծ հերոսութեալ հարդկացած չորս առանձին ճյուղերից։ Դրանցից առաջինը հայտնի յին «Սանասար և Բաղդասար», յերկորդը՝ «Մեծ կամ Առյուծածե Մհեր», յերրորդը՝ «Սատունցի Դավիթ» և չորրորդը՝ «Պատիկ Մհեր» անունով։ Վեպի լավագույն և ամենաընդարձակ մասը կազմում է Դավիթի ճյուղը։

Կապված լինելով իրար հետ մի միասնական գաղափարով (հայրենիքի պաշտպանություն), սերուսդների հաջորդությամբ (հոր և վորդու կապով) և վիպական գործողության աշխարհագրական միջավայրի (Սատուն) ընդհանրությամբ, վեպի վերօնիշյալ ճյուղերից յուրաքանչյուրն ունի իր գործողության ինքնուրույն կենտրոնն ու անկախ կյանքը։

ՎԵՐԻ ՃՅՈՒ, ԵՐԻ ՃՅՄԱՌՈՑ ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ,

Ա. Ճյուղ («Սատունցի յով Բաղդասար»): Բաղդազի խալիքան, Հայաստանի վրա կատարած իր արշավանքներից մեկի ժամանակ, բոնությամբ կնության և առնում հայոց Գագիկի թագավորի աղջկան՝ գեղեցկուհի Ծովինարին։ Ծովի մեջ գտնվող աղբյուրից իր խմած մեկ լիք և մեկ կիսատ բուռ ջրից հղիանալով Ծովինարը ծնուժ է յերկու դյուցազուն զավակներ՝ Սանասարին (լիքը բուից) և Բաղդասարին (կիսատ լուից)։ Ժամանակ անց Բաղդազի խալիքան՝ յերկիրն ամերելու և առ ու թալան բիրելուն պատակով, նորից և արշավում Հայաստանի վրա Լուրջ գիմագրության հանգիպելով հայերից, նոտ ոգնության և կանչում իր մեծ կրուքին՝ մատադ խոստանալով նրան իր յերկու զավակներին։ Իմանալով այդ մասին Ծովինարից, Սանասարն ու Բաղդասարը սպանում են խալիքային և վերջներով իրենց մորը, նըստում են՝ Սանասարը ծովի տակից հանված Քուռկիկ Զալափին։

իսկ Բաղդասարը մի քամու ձի և հեռանում խալքի յերկրից: Յերկար թափառութիւններից հետո, Սանասարն ու Բաղդասարը մի լեռնային անառիկ վայրում մեծ և ահոելի քարերից կառուցում են իրենց բերդ—շենք, վորի անունը մի գեղջուկ ծերուկ Սասուն և գնում, ասելով՝ «սուն վեր սան սասուն»: Լսելով յերկու հերոսական յեղբայրների համբավը, շրջակայքի անապահով ու աղքատ բնակիչները կամաց-կամաց հավաքվում են Սասոն բերդի շուրջը: Սանասարն ու Բաղդասարը նրանց համար տներ են կառուցում (4 որում շինում են 40 տուն): Կարճ ժամանակից Սասունը չառնում և մարդաշատ ու շեն մի յերկիր:

* * *

Ստանալով Դաջանց թագավորի աղջիկ՝ քառասուն ճյուղ ծամ Դեղօւն Ծամի նամակը, Սանասարը գնում և Պղնձե քաղաքը նրան բերելու: Ճանապարհին մի շարք արգելքների յի հանդիպում (վաթսուն փահեվաններին, ջուրն արգելող վիշապին): Բաղդասարն իր սեացած մատանուց գուշակելով յեղբոր ծանը զրությունը՝ ոգնության և համում նրան: Յերկուսով հաղթահարում են բոլոր զմվարությունները և բերում թե Դեղձունին և թե նրա քրոջը: Ամուսնանում են՝ Սանասարը Դեղձունի, իսկ Բաղդասարը նրա քրոջ հետ:

Սանասարից և Դեղձունից ծնվում են Վերգոն, Զենով Հովոնը և Մհերը:

Բաղդասարը մնում և անժառանգ: Նա թողնում և Սասունը և գնում Բաղդադ, վորտեղ և մեռնում ե:

Մհերի ծնվելուց հետո, շատ չանցած, մեռնում և նաև Սանասարը:

Բ. Ճյուղ («Մեծ կամ Սոյուծածեվ Միեր»): Մհերը մանկությունում և պարապել վորորդությամբ: Վորատի նա յոթ տարի կերակրում և իր հայրենիքը Սասունը հարկան յերկրների հետ կապող ճանապարհին մի առյուծ և լույս ընկառում: Մհերն սպասում և առյուծին և ազատում յերկիրը վերահս սովից:

Այնուհետև, մեռամարտի մասելով Մեծ Մարա Մելիքի հետ, Մհերը հաղթում և նրան և ազատում Սասունը Մելիքին հարկատու լինելուց:

Քեսին և հորեղբայրն ուզում են ամուսնացնել Մհերին դեղկուհի Արմաղանի հետ: Պարզվում է, վոր Արմաղանին տարել ե Խաթի Սպիտակ դեմքը: Մհերը գնում, սպանում և Սպիտակ դեմքին և ամուսնանում Արմաղանի հետ:

Մհերից և Արմաղանից ծնվում և Դավիթը: Շուտով մեռնում են Մհերն ու Արմաղանը: Դավիթը մնում և իր հորեղբոր՝ Զենով Հովանի լինամքին:

Փ. Ճյուղ («Սասունցի Դավիթ»): Զկաբողանարով պահել Դավիթին, Զենով Հովանն ուղարկում և նրան Մըսր՝ Իսմիլ Խաթունի մոտ, վորի հետ կենդանության ժամանակ ապրել եր Մհերը՝ ունենալով նրանից Մըսրա Մելիքի անունով մի արու զավակ: Խաղի ժամանակ Դավիթը բռնում և Մելիքի զուրղը: Դավիթի մեջ իր ապագա թշնամուն գուշակելով, Մելիքը փորչում և սպանել տալ նրան, սակայն չի հաջողում: Դավիթը գալիս և Սասուն՝ հորեղբոր (Զենով Հովանի) և քեռու (Թորոսի) մոտ: Զենով Հովանը նրան նախրապահն և զարձնում: Դավիթն ընկերանում և նախրորդների հետ, սպանում և նրանց տավարը տանող դեվերին և վերջիններս թարանած հարստությունն ու վոսկին վերադարձնում Սասունի բնակչությանը:

Շուտով Դավիթը թողնում և նախրորդությունը և գառնում փրատրք: Մի որ ել փորսից վերադանարով, իր հայրենական տանը գտնում և Մելիքի հարկահաններին՝ 7 տարվա հարկը չափելիս:

Դավիթը պատուհասում և նրանց և գատարկ հետ վերադարձնում: Զայրացած Մըսր Մելիքը միծ գործով գալիս և Սասունի վրա: Կորեկի արտի տեր աղքատ պառավի ցուցմունքով Դավիթն առնում և հորեղբորից հոր զինքերն ու ձին, զինավավում և զնում Մելիքի զորքի գեմ: Մըսր բանակից մի ծերունի զորական հորդում և Դավիթին վերջ տալ զոռով կովի գաշտ բերված անմեղ զինվորների կոտորածին և մենամարտել իրեն՝ Մելիքի հետ: Լսելով արար ծերունու խոսքերը, Դավիթն ընդհատում և կոտորածը և ձին քշում գեպի Մելիքի վրանը: Մելիքը գավադրագար հորն և նետում Դավիթին: Զենով Հովանի ոգնությամբ Դավիթը դուրս և գալիս հորից և մենամարտելով Մելիքի հետ թրի մի հարվածով գոչնչացնում և նրան:

Զենով Հովանը նշանում և Դավիթին խլաթցի Զմշկիկ Սուլթանի հետ: Սակայն Դավիթը լսելով գուսաններից կապուտկողցի զե-

ոլեցիուհի Խանդութ Խանումի դովքը, թողնում և Զմշկիկին, գնում Կապուտկող, հաղթում Խանդութի հոր թշնամի յոթ թագավորներին և բերում իր հարմացվին: Ճանապարհին Դավթի գեմ և գուրս գալիս Զմշկիկը և մենամարտի հրավիրում նրան իրեն հասցրած վիրավորանքի համար: Դավիթը խոսք և տալիս տանել Խանդութին տուն և յոթ որից վերադառնալ կռվելու, բայց գալով Սասուն և ամուսնանալով Խանդութի հետ, մոռանում և իր խոստումք...»

Դավիթից և Խանդութից ծնվում և մի դյուցազուն մանուկ: Իր հոր՝ Առյուծածե Մհերի անունով, Դավիթը նրան Մհեր և կոչում:

Յոթ տարի անց մի որ լողանալու ժամանակ Դավիթը տեսնում և իր թեփի սեացած Խաչ Պատերազմին և, հիշելով Զմշկիկին տված իր խոստումը, շտապով գալիս և նրա մոտ: Գետափի յեղեգնուտից դուրս և գալիս Զմշկիկի դարանակալած աղջիկը և թունավոր նետով մեջքից վիրավորելով, սպանում և Դավիթին: Լսելով նրա մահվան բոթը Խանդութն ինքնասպան և լինում բերդի տամիթից իրեն ցած նետելով:

Դ. Ճյուղ («Պատիկ Մհեր»): Մհերը քեռու և հորեղբոր հետ առնում և Դավիթի արյան վրեժը՝ սպանելով Զմշկիկին և ավերելով Խլաթը: Նա պատժում և նաև իրեն թշնամիների ձեռքը հանձնող մատնիչ վանահորը՝ գլուխը սյան տակ թողնելով: Մհերն ամուսնանում և Պաճիկ թագավորի աղջիկ գեղեցկուհի Գոհարի հետ: Իր շրջագայությունների միջոցին նա լնկերանում և 40 վահարելիվան յեղբայրների հետ, սպանում և նրանց հայրենի քաղաքն ավերող մարդակեր պառավին: Ժամանակ անց Մհերը Զենովիանի կանչով գնում և Սասուն՝ վոչնչացնում իր հայրենի հողը տիրել փորձող կողբազնի չորս թոռներին, ազատում նեղեղից Զգիրե քաղաքը... Տուն գալով Մհերը մեռած և գտնում կնոջն ու հորեղբորը: Մենակ մնացած լինելով աշխարհում և դառնացած շրջապատի անարդար կարգերից՝ գաղաղած Մհերը կոիվ և պահանջում աստծուց, մենամարտում վերջինիս ուղարկած հրեշտակների հետ և... փակլում Ակովու քարում: Իրեն այցի յեկած հովի հարցումին, թե յե՞րբ և նա մտադիր գուրս գալու քարից, Մհերը պատասխանում ե.

«Բանի աշխարքը չար ե,

Ու հողն ել դալբցեր ե,

Յես չեմ մնա մեջ աշխարքին:

Վոր աշխարք տվերդի մեկ ել շինով՝
Յերսը ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու պարին եղավ քանց ընկուզ մի,
Են ժամանակ հրամանք կա, վոր ենենք ևստեղեն»:

Ա. 118, 933, Բ. 44

2.

Ինչպես ամեն մի ժողովրդական վեպ, «Սասունցի Դավիթը» իր հմքով պատմական ստեղծագործություն և Նրա մեջ վիպականորեն անդրադարձել են՝ արաբական խալիֆաթի դաժան տիրապետության դեմ հայ ժողովրդի մզած աղառագրական պայքարի դրվագները 7—10 դարերում:

Վեպի մեր ձեռքի տակ յեղած 50 պատումներում նկարագրված գեղքերի ու գեմքերի զուգալրություննամեմատությունը հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, իրական գեղքերի ու գեմքերի հետ պերճախոս կերպով հաստատում և այդ բանը:

Պատմությունից հայտնի յե, վոր 7-րդ դարի կեսերին, արաբական խալիֆաթը, մի քանի անգամ արշավանքներ կազմակերպելով Հայաստանի վրա (640, 642—643 թ.թ.), ավերելով յերկիրը, կողովածելով ու գերեգարելով ժողովրդին, 650 թվին հաջողում և տիրել Հայաստանին, դարձնելով այն իրեն հպատակ յերկըրներից մեկը: Հայաստանի վրա, այնուհետև, ծանրանում և արաբական խալիֆաթի հարկային քաղաքականության ժանր լուծը, վոր տեսամ և մոտ յերեք դար: Արար խալիֆներն իրենց վոստիկանների միջոցով հարկի անվան տակ, սկսում են կողովածել յերկիրը, թալանել ժողովրդին՝ տանելով նրա ունեցվածքն ու ապրուստի վերջին միջոցները: Իրենց շառաքելությունը հաջող կատարելու համար արար վոստիկաններն ու հարկահանները վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում (ծեծ, կախաղան և ացլն):

Արարական խալիֆաթի՝ Հայաստանում վարած հարկային կեղեքիչ քաղաքականության և հարկապահանջության ժամանակ արար վոստիկանների կողմից գործադրվող դաժան միջոցների մասին վորոշ գաղափար տալու համար բերենք ժամանակակից հայ պատմիչ՝ (8-րդ դար) Ղենազի մի վկայությունը. «Զսոյն ժամանակս ի հրամանատարության եղթափ և յիշմանութեանն Արդայի միւսոյ յոյժ ծանրացավ անուր լծոյ հարկապահանջու-

թեան ի վերայ աշխարհիս հայոց. քանզի դժոխաձեւ ագահութիւն անհամբոյլ թշնամոյն ոչ շատացաւ ուտել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հոտիս և ըմպել զարիմ իրբե զջուր զարհամարհանս նոցա. այլ համօրէն զբոլոր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վարանդիւք. զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ վոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, զելարանօք, և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ վախստեայ եղեալ բաղումք յայրս և ի փատարս երկրի՝ զօղեալ թագչէին. և ումանք ձիւնահեղձ և զետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն. զի ոչ էր գիւտ զոր հայցէինն, գտանել պահանջումն սակի արծաթոյն, այլ ըստ գլխոյ արանց. որովք թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին կապանօք տնանկութեան երկիրս Հայոց, և առհասարակ ճաշակէին ի հնոցէ աղքատութեան» (տես Ղետոդ, եջ 135—136):

Սակայն արարները չեն բավականացել միայն գրամական և բնարդյունքի հարկերով, վորոնց մասին գրում են մեր պատմիչները: Զշրդ գարի արար մատենագիր Ահմեդ Բալաձորիի վկայությամբ՝ նրանք նվաճած յերկրներից հարկ են պահանջել, բացի նյութական բարիքներից, նաև վորոշ թվով «սեվահեր, սեվահոն, յերկար արտեանունքներով և բարձրահասակ» աղջիկներ ու պատանիներ:

Արարների աիրապետության վողջ շրջանում Հայաստանի ազգարնակությունը՝ աշխատավոր գյուղացիությունն ու ռամիկները, մերթ ավելի, մերթ պակաս, դանվել են խալիքաթի հարկայն քաղաքականության ծանր լծի տակ:

Սակայն, հայրենասեր և ազատատենչ հայ ժողովուրդը լոելցան չե, վոր ընդունել ե արարական աիրապետությունը և վոչ ել հնազանգությամբ յենթարկվել խալիքաթի հարստահարություններին: Նա մեկից ավելի անգամներ հերոսաբար պաշտպանել ե իր հայրենիքի սահմանները արաբական բանակների հարծակումներից և բազմից զինված ապստամբել արար կեղեքիչ հարկաւ հանների և վոստիկանների գեմ:

7—10 Դարերի մի շարք հայ և արար մատենագիրներ հիշատակում են արարների արշավանքների և հարստահարությունների դեմ հայ ժողովրդի կազմակերպած՝ զինված ինքնապաշտպանությունները:

Բերենք մի քանի բնորոշ փաստեր:

7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսի վկայությամբ, 640 թ.
աշնանը Դվինի վրա արշավող արարական զորքերը քաղաքում
հանդիպում են Արարատյան դաշտի բնակիչների և Դվինի պա-
հապան զորքերի միացյալ դիմագրությանը: Իրեն գեպքերին
ժամանակակից, Սեբեոսը մանրամասն հիշում ե հայ ժողովրդի
մղած կոփվը քաղաքը պաշարած արարաների դեմ: Նույն Սեբեոսը
գրում ե նաև արարաների Հայաստանի վրա կատարած յերկրորդ
մեծ արշավանքի ժամանակ (642—643 թ.թ.) հայերի ցույց տված
ռազմական լուրջ դիմագրության մասին:

Արարաների դեմ մղած հիշյալ ճակատամարտերը կաղմա-
կերպել և գլխավորել և 7-րդ դարի հայ աչքի ընկնող քաղաքա-
կան գործիչ և խոշոր ռազմագետ՝ պատմական թհողորոս Ռշտու-
նին:

Հաճախակի յին յեղել Հայաստանում նայել արարաների դեմ
ուղղված ապստամբությունները:

Այսպես, որինակի 8-րդ դարի հայ պատմիչ Ղեղոնդը հիշում
է, վոր Շիրակի ժողովուրդը չկարողանալով տանել արարաների
կողմից կիրառվող հարկահանության և շահագործման դաժան ձեւ-
րը, «վոգի ի բովին» դիմում ե միջոցների և, լավ համարելով քա-
ջաբար մեռնելը վտանգավոր կյանքից, 772 թ. Արտավազդ Մամի-
կոսյանի գլխավորությամբ ձեռնամուխ և լինում ապստամբու-
թյան և նույն թվին Կումայրիում (Գյումրի—Լենինական) սպա-
նում արաբ հարկահավաքին: Ապստամբությունը ձնշվում է Դվի-
նից ուղարկված արաբական զորքերի ոգնությամբ միայն:

Շիրակին հետևում ե պատմական Հայաստանի Բագրեկանդ
և Տարոն գավառների բնակչության ապստամբությունը՝ Մուշեղ
Մամիկոնյանի ղեկավարությամբ: Ղեղոնդի վկայությամբ այս
ապստամբությանը հարել են «բոլոր վշտակիրներն ու վտանգված-
ները», «ռամիկ ժողովուրդը» . . . «Յեկ այսպես միախուռն ժո-
ղովեալք առ միմիանս արք իրեն 5,000, զի բազումք ի ոսմիկ
ժողովոց յեկյալ խառնելին ի գունդն նոցա . . .»: Ապստամբները
սպանում են հարկահանին, քշում յերկրի սահմաններից՝ ապօս-
տամբությունը ձնշելու ուղարկված ավելի քան 4,000 հոգուց բաղ-
կացած արաբական կանոնավոր զորքը:

Ապստամբների այս հաջողությունները վոգեվորում են Հա-
յաստանի մյուս գավառների ազգարնակությանը: Մեկը մյուսի
հետեւից վոտքի յին յեխում Հայաստանի բոլոր նահանգներն ու
գավառները:

Ապստամբությունը ձնշելու համար արաբական խալիֆաթը 775 թ. գարնանը 30,000 թուրքական զորք և ուղարկում Հայաստան: Անհավասար կովում ապստամբները պարտփում են:

Ժողովրդական ապստամբությունների հետևյալ մեծ ալիքը արաբական խալիֆաթի դեմ բարձրանում է 850 թվին, պատմական Հայաստանի Տարոն և Սասուն գավառներում:

Ի՞նչպես նախորդ, նույնպես և այս ապստամբություններին առիթ և ծառայում խալիֆաթի հարկային քաղաքականության խստացումը: Համառոտակի նշենք այդ ապստամբության հետ կապված պատմական փաստերը:

849 թվին Զափր (Մուտավաքիլ) անունով արար ամիրապետը Հայաստան և ուղարկում էր Արուսեթ վոստիկանին՝ հարկ հավաքելու: Սակայն Արուսեթի «առաքելություն» անհաջողության և մատնվում: Տարոնի և Վասպուրականի բնակչությունը կես ճանապարհից հետ և վերադարձնում նրան, տալով պահանջված հարկի մի մասը միայն: Արուսեթին հաջորդում են նրա զորագարներ՝ Ալան և Մուսեն: Մրանք ուզում են զենքի ուժով հասնել իրենց նպատակին, սակայն մեծ ջարդ կրելով նույն գավառների ապստամբ ժողովրդի կողմից, հազիվ են ազատում իրենց կյանքը: Պարտված Մուսեյի և Ալայի փոխարեն, ամիրապետը 851 թվին մեծ բանակով Հայաստան և ուղարկում Յուսուֆի վոստիկանին: Աերջինս գրավում է ամբողջ հարավային Հայաստանը, ավերելով յերկիրն ու գերեվարելով բնակիչներին: Վերսում հիշվոծ արար մատենագիր Բալածորիկի վկայությամբ, Յուսուփի գմբառական կառավարիչներից մեկը՝ ալ-Ալյա իրն Ահմադ անունով, նույն ժամանակ կողոպտում և Սասունում գանվող Աքթահ-Աքթան (=Մարութա) անունով վանքը, անաբում ու կոտորում նրա միաբաններին:

Յուսուփի ավերածությունների և գերեվարության մասին վկայում են նայել հայ պատմիչ Թոմա Արծրունին. «... վարեաց գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տերութեան Տաճկաց. և զկես գերւոյն ընդ իրեանց ունելով ի քաղաքն, լինել իրեանց ջրկիրս և փայտակտորս ... յավեր գարձուցյալ զբնավ աշխարհն» (Թ. Արծրունի, Պատմություն Հայոց, եջ 118):

Յուսուփի և նրա զորականների ասպատակություններից, շնորհիվ իր անառիկ գիրքի և ըմբոսա ժողովրդի, գերծ և մնում Սասունի Խոյիթ կոչվող լեռնային մասը միայն: Վերջինիս բնա-

կիշները (վորոնք ըստ Բալթձորիի գյուղացի մշակներ են), Խութեցի Հովհաննի առաջնորդությամբ սպասամբում են Յուսուփի դեմ և «համագունդ ի մի վայր հավաքեալ և զմի զինուորութիւն զինուորեալ և յանկարծակի ի վերայ տարմաբար յարձակեալ» գալիս են նրա զորքերի վրա, դուրս քշում իրենց յերկրից և աղատում բանտարկված գերիներին։ Այնուհետև ապրատամբները շրջապատում են Մուշի ս. Փրկիչ յեկեղեցին, վորք գմբեթի մեջ ապաստան եր գտել սարսափահար Յուսուփը։ Նրանցից մեկը բարձրանում է գմբեթը և տեղն ու տեղը սրախողխող անում Յուսուփին։

Ապստամբությունը ճնշելու և Յուսուփի սպանության վրեժն առնելու համար 852 թվին խալիքաթը, Բուղա զորավարի գլխավորությամբ, մի մեծ բանակ և ուղարկում Հայաստան։ Հերթով ճնշվում են Հայաստանի տարրեր զավառների ապստամբությունները, կոտորվում, գերեվարվում են բնակիչները և հրի ու սրի մատնվում յերկիրը։

3.

«Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի պատմական առանցքն են կազմում 7—10 դարերում Հայաստանում տեղի ունեցած վերոհիշյալ անցուղարձերը, մասնավորապես հարկահանությունը և վերջինիս պատճառով հայ ժողովրդի և հատկապես Սասունի ու հարեւան գավառների աշխատավոր գյուղացիության արարական խալիքաթի և նրա կեղեքիչ վոստիկանների գեմ մղած հերօսական կոփմերն ու ապստամբությունները։

Ինչպես պատմության, այնպես ել վեպի մեջ (Դավիթի ճյուղի անխտիր բոլոր պատումներում), Բաղդադի խալիքը կամ Մարա Մելիքը (վոր պատմականորեն փոխարինել ե Բաղդադի Խալիքին) իր հարկահաններին (Կողբագին, Բաղին, Մյուղին և այլն) ուղարկում ե Սասուն յոթ տարվա հարկը բերելու։

«Ելավ, Մարա Մելիք ոխտը մարդ ճամբեց,
Ասաց.— Իմ խարջ ոխտը տարի կա, չեն տվեր.
Ոխտը ուղտի բեռ վոսկի ե.
Ոխտը ուղտի բեռ արծաթ.
Քառսուն ազապ աղջիկ ել արմաղան.
Քառսուն կարծ կնիկ՝ երկանք աղան.
Քառսուն անծին երինջ մատադ.
Քառսուն բուղա—աչառ լծկան։»

Ա. 346

Սակայն, ինչպես պատմության մեջ, նույնպես և վեպում,
հարկանանները միշտ չեն, վոր կարողանում են կատարել իրենց
արված հանձնարարությունը: Դավիթը պատուհասում են նրանց և
ձեռնունայն հետ ուղարկում:

«... Դավիթն ել խերսոտեց, կայնավ,
Զչափ եղար կողբազնի ճակատ.
Կողբազնի պռկտեր կտրեց,
Ատամներ լի քաշեց, բվանեց ճակատ, ասաց,
— Գնա, ջուհափ տուր քու Մըրա Մելքին,
Ինչ կանի: Թըլս անի»:

Ա. 16

Բացի հարկանությունից, վեպի մեջ (դարձյալ Դավիթի ճյուղի համարյա բոլոր պատումներում), արձագանք և գտել նաև
արար վոստիկաններից մեկի կողմից՝ Աստունում գտնվող Մարու-
թա վանքն ավերելու և վանքի միաբաններին կոտորելու վերե-
գում հրշքած պատմական միջադեպը:

Մորա Մելքիքը (Բաղդադի խալիֆան), լսելով, վոր Դավիթը
վերանորոգել և Մարութա վանքը, ուղարկում է իրեն մարդկանց
(Կողբազնին, Խոլբաշուն և այլն), վորպեսզի գնան ու քանդեն
այն.

«Մորա Մելքիք իմացավ՝
Դավիթ Մարութա Բանձրիկ Ասպարածին
Նորեն շիներ և.— Կուղբազին, ասաց,
Գնա, զՄարութա Բանձրիկ Ասպարածին քանդի, արի:
Կուղբազին առավ հինգ հազար ձիավոր, եկավ.
Մարութա Բանձրիկ Ասպարածին քանդեց.
Սպանեց քառսուն նորընծա երեց.
Սպանեց քառսուն վարդապետ.
Սպանեց քառսուն յեպիսկոպոս.
Սպանեց քառսուն ավագ սարկավագ.
Սպանեց քառսուն պակաս մեկ սարկավագ»:

Ա. 74

Յեղ ինչպես վոր պատմության մեջ Աստունի գյուղացիու-
թյունը անպատճե չի թողնում վանքն ավերող և միաբաններին
կոտորող վոստիկանին, ապստամբելով և դուրս գոնդելով նրան
Աստունից, այդպես ել վեպում Դավիթը Մարութա վանքի ավեր-
ման բոթն առնելուն պես՝ հետապնդում են Կողբազնին (Խոլբա-
շուն և այլն) և բռնելով նրան պատուհասում:

Այս անգամ մեծ զորքով Սասունի վրա յէ գալիս ինքը
Մորա Մելիքը (Բաղդադի խալիֆան):

«Մորա Մելիք ժողվեց իր կոշուն,
Եկավ կեռա զաշտ—Բաթմանա ջրու վերեն:
Ենու կոշուն հնաքան եր,
Վոր գետու վրեն առաջի եկողը ջուր խմավ,
Խմելով՝ գետ կտրավ,
Ցածի մարդիկ առանց ջուր մնացին:
Ջուղար տվեց Դավթին,
Թէ, «Քու հողն երա, յես եկա»...

Ա. 351

Կոիվը վերջանում է Դավթի հաղթանակով, վորը թրի մի՛
հարվածով վոչչացնում է քառասուն գոմշի կաշու, քառասուն
ջրաղացի քարի տակ թագնված թշնամուն.

«Դավթի գնաց, եկավ,
Հիշեց զՄարութա Բանձրիկ Աստվարածին,
Խաչ Պատերազմին, ինչ վեր իր աջ թեփին,
Ջուր մեկ թուր եղար:
Վոր եղար, զքաւասուն գոմշի կաշին կտրեց,
Քառսուն ջաղջի քար լե կտրեց,
Մորա Մելիքի գլուխ գագաթ լե կտրեց»:

Ա. 31

Մորա Մելիքի մեծ զորքով Սասունի վրա արշավելու, Դավ-
թի և Մելիքի կռվի, և Դավթի ձեռքով Մելիքի սպանվելու այս
պատմությունները հիշեցնում են՝ Սասունից հալածված Աբուսեթ
և Մուսե անուններով պատմական հարկահանների փոխարեն՝ ապլու-
տամբ ժողովրդին հնագանդեցնելու և յերկիրը կողոպտելու նպա-
տակով ամիրապետի կողմից մեծ զորքով Հայաստան ուղարկված
Յուսուֆ վաստիկանի գեմ Խութեցի մշակների ապստամբությունը
Հովհաննի ղեկավարությամբ, և ապստամբներից մեկի կողմից Յու-
սուֆին Մուշի ս. Փըկիչ յեկեղեցու գմբեթում սրախողիսող անելը»

«Սասունցի Դավթի» մեջ պատմական են վոչ միայն կարեռը
գեպքերը, այլև զործող անձերից մի քանիսը:

Վեպի կենտրոնական դեմքը՝ Սասունցի Դավթիը, Բաղդադի
խալիֆայի կամ Մորա Մելիքի գեմ մղած իր հերոսամարտով, հի-
շեցնում է Յուսուփի գեմ Սասունի ժողովրդական ապստամբու-
թյան կազմակերպիչ և ղեկավար՝ Խութեցի Հովհաննին:

Ճիշտ է, Դավթիթը չի կրում Հովհան անունը, բայց վերջինս
մնացել է վեպի մեջ, կապերելով Դավթի կյանքի ու գործի մասնա-
կից նրա հորեղբոր (Զենով Հովհանի) անվան հետ: Ժողովրդական

վեպի մեջ անունների ու անձերի նման «տեղաշարժեր» հազվագել չեն:

Վեպի պատմական յերկըորդ կարևոր դեմքը՝ քեռի թուրուն և կամ Թևաթորոսը, վոր վիպական արձագանք և արաբների ներխուժման դեմ հայ ժողովրդի զինված դիմադրությունները գլխավորող, վերփում հիշված պատմական Թեոդորոս Ռշտունու: Այսուհետեւ պետք է հիշել Դավթի վոսով Բաղդադի խալիֆին: Վերջինս վեպի մեջ կրում է նույն անունը և կատարում նույն գերը, ինչ վոր իրական պատմության մեջ:

Այսպես, պատումներից մեկի մեջ նա մեծ զորքով դալիս և Հայաստանի վրա, կոտորում ժողովրդին և ահագին քանակությամբ գերիներ տանում.

«Բաղդադի խալիֆին շատ զոր ու զորքնեղ կեղնի,
Ասքար կենե, կը գտ վեր մեր ազգին.

Շատ զմեր ազգ կը նվազցու,

Ու շատ գերի կը բռնե, տանի»:

Բ. 7

Մի այլ տեղ՝ նա իր հարկանավաքներից լսելով հայոց թագավորի աղջկա անպատմելի գեղեցկությունների մասին և ցանկանալով անպայման տիրել նրան, հրամայում և իր մարդկանց զնալ Հայաստան և ինչ գնով ել լինի բերել աղջկան.

Խալիֆին ասաց.

— «Հա, ասքար, ասքար երեք, գնացեք,

Աղջիկը կը տա, կը տա, չի տա՝

Քար քաղեցեք, ավագ մաղեցեք.

Ժողվեցեք, բերեք՝ ինչ կա»:

Ա. 309

Վեպի մի շարք պատումներում արձագանք և գտել նաև Սառաւունն ավերող պատմական Բուղա վոստիկանը, սակայն վոչ թե իբրև վոստիկան կամ հարկանավաք, այլ իբրև Մարա Մելիքի (Բաղդադի խալիֆայի) փահելման՝ Բաթմանա Բուղան, զորին Մելիքը (կամ խալիֆը) հանձնաբարում և սպանել մանուկ Դավթին.

«Ելավ, ինչ երավ Մելիք. —

զԴավիթ տվեց Բաթմանա Բուղան,

Զարբահար Քամին փահելմաններուն,

Թասլիմ երաց, ասաց, — Եսու կը տանիք,

Կերթաք Բաթմանա կարմաջի վերեն,

Կը սպանեք, ինձի մեկ շուշա երուն կը բերեք,

Ենու ջանդակ կը թալեք գետ, կերթա.
Ենու երուն կը բերեք,
Վոր յես խմեմ, իմ սիրո խովնա»:

Ա. 337

«Սասունցի Դավթի» մեջ, բացի վերոհիշյալ պատմական գեղքերից ու գեմքերից, վորոնք վերաբերում են գլխավորապես Սասունի IX դարու պատմությանը և վորոնք կազմում են վեպի պատմական առանցքը, կամ նաև պատմական մի շարք այլ հիշողություններ՝ ավելի հին և ավելի ուշ շրջաններից:

Հին շրջանի հիշողություններից ե, որինակ, պարսից Շապուհ արքայի անվան հիշատակությունը (Շապուհ արքան, Շըպըքան Խորասական և այլ ձեւերով): Վերջինս վեպի մեջ հանդես ե դալիս իրեւ Խանգութ Խանութի ուզնկաններից մեկը: Դավիթը կովում և նրա դեմ և սպանելով առնում Խանգութին:

Իրեւ նոր շրջանի հիշողության նմուշներ կարելի յի հիշել՝
1. Բապը Ֆրենկին (Հոռմի պապին): Ինչպես Շապուհ արքան, առ ևս վեպում հանդես ե գալիս իրեւ Դավթի թշնամիներից մեկը, վորի գեմ կովում և սպանում և Դավիթը:

2. Մարա Մելքքին, վոր արձագանք և XIII դարի սկզբաներին Հարավային և Արևմտյան Հայաստանը գրավող Մարա (Յեղիպտոսի) եյուրյան հարստության թագավորների (մելիքների), վորոնց դեմ հերոսական ու համար կորիմներ են մղել պատմական Հայաստանի հիշյալ յերկու մարզերի և մասնավորապես Սասնո գալառի բնակիչները:

«Սասունցի Դավթի» մեջ պատմական վերոհիշյալ հին ու նոր գեղքերի ու գեմքերի հիշատակության հետ մենք գտնում ենք նաև դրանց շուրջը հյուսված վիպական բանահյուսության նկատելի արձագանքները, մասնավորապես՝ պարսից նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած յերկարամյա հերոսական կորիմների մասին ստեղծված մեր հին ժողովրդական վեպի արձագանքները (տես՝ Մամիկոնակի, Վաչեյի, Մուշեղի, Պապի և ուրիշների շուրջը հյուսված ժողովրդական պատմվածքներն ու զբույցները, վոր պահպանվել են Փ. Հյուզանդի և 5-րդ ու հետագա դարերի մեր մի քանի այլ մատենագիրների մոտ):¹

4

«Սասունցի Դավթի» թեման (պատմական ատագձը) արարական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական-

¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, տես՝ «Ազգագրական հանդես», 1907 թ. գերք XVI, էջ 101—103:

ապատագրական պայքարը լինելով, նրա բուն եյությունն են կազմում հայրենասիրության, ժողովրդասիրության, ազգային կամերաշխության ու խաղաղասիրության գաղափարները, ժողովրդի իշելուն ու յերազները՝ խաղաղ աշխատանքի և լիառատկանքի մասին:

Առաջին և ամենահիմնական գաղափարը, վոր կարմիր թե՛լի նման անցնում ե վեպի բոլոր պատումներում, դա հայրենասիրությունն եւ «Սասունցի Դավթի» գլխավոր հերոսները դրա կենդանի կրողներն են: Նրանք սերտորեն կապված են իրենց յերկրին և անսահմանորեն նվիրված նրա պաշտպանության գործին:

Վերն ե այդ հայրենիքը և ինչպէ և նա նվիրական Դավթի մայուսների համար:

Վեպի հերոսների հայրենիքը («խերանական յերկիրը» կամ «խերանց խերանան») Սասունն ե, պատմական Հայաստանի հարավային գավառներից մեկը, վոր հայտնի յերեղել իր լեռնաշին անառիկ գիրքով և ըմբոստ ու հերոսական ժաղովրդով: - Այստեղ են ծնվում, աշխատում և կատարում իրենց սխրագործությունները վեպի գրեթե բոլոր գլխավոր հերոսները: Սասունը նվիրական ե նրանց համար.

1. Վորովհետեւ այն խլված չե ուրիշից բռնության ու զենքի ուժով, այլ հիմնադրված ե իրենց իսկ կողմից՝ քրտնաշան աշխատանքի և բնության տարերքի գեմ մղած պայքարի գնով (տես՝ յերկու յեղբայրների կողմից Սանո բերդի հիմնադրման պատմությունը):

2. Վորովհետեւ այնտեղ ապրում ու աշխատում ե վեպի հերոսներին հարազատ աշխատավոր ժողովուրդը, վորին պաշտպանում ու հովանավորում են նրանք (տես՝ Սանասարի, Բաղդասարի, Մհերի հոգատարությունը Սամսա բնակչության համար):

«Սասունցի Դավթի» հերոսների սերը վեպի իրենց հայրենիքը զուգորդված ե նրանց վեպի ժողովուրդն ունեցած ջերմ սիրո հետ: Դրա առաջին փայլուն որինակը վեպի մեջ տալիս ե յերկու դյուցազուն յեղբայրների (Սանասարի և Բաղդասարի) ժայրը՝ Ծովինարը: Յերբ Բաղդատի խալիքան նրան տիրանալու պատակով լը վերջնագիր սուլառնալիքն ու ուղարկում Գագիկ թագավորին, Ծովինարը ինքնակամ վորոշում ե գնալ դառնալ տտելի խալիքի կինը, մտածելով՝

A 3/911

2346

«Վար չերթամ,
իմ հոր յերկիր քար քաղեն, ավագ տի մաղեն.
Ցես մեկ ջան եմ, երթամ կորսվիմ լավ և,
թանց իմ հոր յերկիր ավերի:
Ծովինար խոսք ետու»:

Ա. 309

Հայրենասիրության և ժողովրդասիրության վոչ պակառ
ցայտուն որբնակ և Դավթի հոր Մեծ կամ Առյուծաձեզ Մհերի՝
առյուծին սպանելու հերոսական պատմությունը։ Քեռուց իմա-
նալով, վոր Սատունում տիրող թանգության ու սովի պատճառն
իր յերկիրը հարեան հացաշատ վայրերի հետ կապող ճանապար-
հին լույս ընկած առյուծն է, Մհերն անմիջապես շտապում
և այստեղ, մենամարտում նրա հետ սպանում և աղատում ճա-
նապարհը։

«Կանչեց Բանցրիկ Մարաթուկ,
Զեռ թալեց վերի չանգեն, ներքի չանգեն,
Մեջտեղն ճղեց, երեց երկու կտոր,
Մեկ թալեց ճամբու են կողմ,
Մեկն ել ճամբու են կողմ»։

Բ. 146

Յեթե Ծովինարը, մեծ անձնազրհությամբ, աղատում է
իր յերկիրն ու ժողովրդին խալֆի հրոսակների ձիերի սըմ-
բակներից, ապա նրա թոռ՝ Մհերը նույն կերպ, փրկում և սա-
սունցիներին վերահաս սովից։

Բնորոշ որբնակներ են նայել Փոքր Մհերի սխրագործու-
թյունները, մասնավորապես Զմշկիկ Սուլթանին և Կողբագնի-
թոռներին սպանելու պատմությունները։

Դավթի մահվանից հետո, նախ Զմշկիկը և ապա Կողբագնի-
թոռները փորձում են ավերել Սատունը լսելով այդ մասին իր
հորեղբորից (քեռուց), Մհերը կովում է վոչչացնում և թէ մեկնա-
և թէ մյուսներին։

«Մհեր ելավ Թուր Կայծակին քաշեց,
Գնաց զորքին խառնվագ.
Աջու եղար, ձախու եղար,
Վոչ փերը թողեց, վոչ փահեվան,
Վոչ Զմշկիկ Սուլթան.
Ինչ վոր կար, բոլոր կոտորեց, ասաց-
—Ես իմ հոր փոխ»։

«Մհերն եր լուսում ելավ,
Զուր ձին հեծավ, քշեց, գնաց լեռա դաշտ:
Տեսավ կողբագնի չորս թոռներ եկան.

• • • • • • • • • • • • • • • • •
Ելավ չորս թոռներն ել բռնեց, կապեց,
Առեց, եթեր հրողազոր մոտ,

• • • • • • • • • • • • • • • •
Երկուս փառչմեց գուան են կողմ, երկուս են կողմ»:

Ա. 231, 239

Հայրենասիրության և ժողովրդասիրության գաղափարի
ամենափայլուն որինակն ու կենդանի մարմնացումը վեպում, սա-
կայն, հանդիսանում է ինքը Դավիթը:

Տարբեր յերանդներով ու ձեվերով իմաստուն ժողովուրդն
իր վեպում գրսեվորում ու ընդդում ե իր հերոսի՝ հայրենի հող
ու ջրի և վերջինիս վրա ապրող ու բանող աշխատավորության
հետ ունեցած սերտ կապն ու մտերմությունը:

Դեռ ծծկեր յերեխա Դավիթը, Մըսրում գերության մեջ յե-
ղած ժամանակ, համառորեն հրաժարվում է ոտար (Մսրա Մելիքի)
կնոջ կուրծքն ընդունել: Նրան սովածահ լինելուց փրկում է
միայն Սասունից բերել տված մեղքն ու կարագը, վորը նա-
ընդունում է մեծ սիրով, մայրական կաթի տեղ:

«Մըսրամելիքի մեր ելավ,
Վիրուց զտղեն, պետք ի ծիծ տեր.
Իրիք որ իրիք գիշիր են բան չկերավ,
Ենու ծիծ չծըծից:

• • • • • • • • • • • • • • • •
Մըսրամելիքի մեր ճամբխից,
Եղի մեկ բռո մեղք, մեկ կարագ.
Մեղրով, կարագով եղա տղմն կիրըցոց,
Պախից մինչիվ իրիք տարի»:

Ա. 165—166

Դերոհիշյալ հատվածում ժողովրդական վիպասանները շեշտել
են հայրենի մննդի կենարար հատկությունը և Դավիթի՝ Սա-
սունի հետ կապված լինելու հանդամանքը: Նույն բանի արտա-
հայտությունն են նաև Դավիթի (և վեպի մյուս հերոսների)
Սասունի աղբյուրների (Կաթնաղբյուր և այլն) ջրից հզորանալու
պատմությունները: Մսրա Մելիքի դեմ կոիվ գնալուց առաջ

Դավիթը, ժողովրդի ներկայացուցիչ՝ կորեկի արտի տեր աղքատ պառավի կամ իր ձիու խորհրդով, խմում ե իր հոր Կաթնաղբյուրի ջուրը և նոր լիցք ու թափ ստանալով յելնում մարտի.

«Դավիթ լե վեր եկավ,
Են Կաթնաղբյուրի ճուր՝
Ետու ձիու կողաշար՝ լավացավ,
Ենտեղ ճուր խմավ, խաց կերավ,
Բնկավ վար են Կաթնաղբյուրին, քնավ:
Մեկ սհաթ քնավ, ելավ, տեսավ,—
Տեսավ՝ ենպեսն ի լցվի,
Ենպեսն ի Խաստացի,
Ենպեսն ի զորություն, վոժ առի,
Վոր չափալամիշ ի եղի»:

Ա. 22

Բացի իր առասպելական հատկությունից, ջուրն այստեղ ունի նաև այլաբանական նշանակություն. գա հայրենի ընդերքի (իմա ժողովրդի) ուժն ե, գոր ջրի միջոցով ներարկվելով Դավիթին, դարձնում ե նրան անխոցելի:

Թե վորքան սերտ և կտպված Դավիթն իր հայրենի յերկրի ու ժողովրդի հետ, շատ պերճախոս կերպով յերեվում ե նրա Մսրա Մելիքի գեմ կովի գնալուց առաջ արտասանած հրաժեշտի խոսքերից, վորտեղ նա սրտաշարժ կերպով մի առ մի «մնասքարով» և առում թե իր հայրենի «պաղ-պաղ» աղբյուրներին ու քամիներին և թե իր «բարի դրկիցներին», «քույրիկներին» ու «մերիկներին».

«Ծովասարու պաղ-պաղ ախալներ,
Մնացեք բարով, բարի մնացեք.
Յես կերթամ կոիվ, կը ծարվնամ՝
Դուք ինձնից կարոտ մընացեք:
Ծովասարու պաղ-պաղ քամիներ,
Մընացեք բարով, բարի մնացեք.
Յես կերթամ կոիվ, կը շոգնամ՝—
Դուք հով մընացեք:

• • • • • • • • • • • •
«Ո՞վ քուրիր, կացեք բարով
Բնձի քուրութին եք երի,
Ո՞վ մերիր, կացեք բարով,

Զի մերութին եք երի,
Բարի դըրկիցներ, կացեք բարով,
Կացեք բարով մեծ ու պստկով»:

Ա. 194

Սակայն վեպը չի բավականանում Դավթի՝ իր յերկրի
ու ժողովրդի հետ ունեցած սերտ կապը նշելով միայն։ Վոչ պա-
կաս ցայտուն ու վառ պատկերներով այսուեղ գրսեվորվում են
նաև այն մեծ սիրազործությունները, վոր կատարում և Դա-
վթը հանուն իր յերկրի պաշտպանության ու ժողովրդի
ազատագրության։ Հիշենք դրանցից մի քանիսը միայն։

Խրատատու պառավից լսելով, թե ինչպես Մելիքի հարկա-
հանները բոնությամբ հավաքել և մարտքն են լցրել Սասունի
յոթ տարվա հարկ-թալանը, կանանց ու աղջիկներին, իրենց ախ-
րոջն «արմաղան» տանելու համար, Դավթին անմիջապես հաս-
նում և դեպքի վայրը, վիրավորում, քշում հարկահաններին և
ազատում գերին ու ավարը։

Դավթ զմբղբախ քաշեց ու ընկավ մեջ,
Եղ զորք ամեն ջարդ ու փուրդ արեց,
Կնիկ, աղջիկ, արան-թալան՝
Երեր հետ ասաց։

— Ամեն մարդ զա, իրեն տված վերցու,
Ով ապրանք տվե՞՝
Թող զա իր ապրանք վերցու,
Ով ոսկի, փող տվե,
Թող զա իր ոսկին վերցու...

• • • • • • • • • • • • • • •

Զապրանք, զոսկին, զփող,
Ամեն ցրվեց, ետու ժողովրդին,
Ինք եկավ իր տուն նստավ։

Դավթի զայրույթն ու ցասումը հորդում և հեղեղի պիս,
յերբ նա լսում է Մարտ Մելիքի՝ Սասունն ավերելու մասին տված
ազատագրքը։

«Մըրտ Մելիք տաքյար կապեց,
Եկավ վեր Սասմա քաղքին։
Մեջ դաշտին զուր չագըր—իւեվաթ եղար,
Զուհար իրկեց Զենով Հովանին։

Ասաց. — Զինով Հովհան,

Իմ յոթ տարվա խարջ կը տաս՝ տու խաթրով.

Թե չնս ի տա, կը գամ, Սասմա քաղաք ազրեմ,

Տանեմ Մսրա քաղքի քամակ, նոր քաղաք շնոնք»:

Ա. 17

Առանց ժամանակ կորցնելու նա դուրս է գալիս Մելիքի պեմ, վուչչացնուում թշնամուն և ազատուում Սասունը նրան սպառնացող մեծ վտանգից.

«Դավիթ ուր խոր ավդ երալ, —

Մըրամելիք սպանեց, զՍասուն ազատեց»:

Ա. 830

Նույն կերպ Դավիթը վարվում է նաև իր և իր հարսնացվի՝ Խանուութ Խանումի հայրենիքի ու ժողովրդի մյուս թշնամիների (Շապուհ արքայի, Բագը Ֆրենկի, Հալարա թագավորի և Ժյուսների) հետ: Սասմալով նրանց մարտահրավերնամակն, այն մասին, թե՝

«Ել գաս, արի հետ մեղ կռիվ.

Վոր չես իգա, զորք կը քաշենք՝

Քու երկերը քար ու քանդ կամենք,

Ինչ կա - չկա, լուղինք, տանենք»,

Ա. 461

Դավիթը կռիթի յե դուրս գալիս և մեկ առ մեկ տեսնում նրանց զատաստանը.

«Դավիթ գարձավ, զարկեց Շապուհին,

Թուր Կայծակով գլուխ կտրեց.

Բ. 402

Ելավ, զնաց մեկ - մեկ ըերեց,

Ողան - Տողան թագավորներ,

Կտրեց մեկ - մեկ հնոնց վզներ,

Դրեց հնտեղ» . . .

Ա. 215

* * *

Հայրենասիրության ու ժողովրդասիրության հետ սերտորեն շագկապված՝ «Սասունցի Դավիթի» մեջ հանդես են գալիս աղքա- յին համերաշխության և խաղաղասիրության գաղափարները. Աղքային աղատաղրական պայյքարի բովում ծնված մեր վեպի մեջ չկա ազգային ատելություն, մի բան, վոր այնքան բնորոշ և տիրող զասակարգերի հոգեսր սահեղագործության հուշարձաննե-

բին: Աշխատավոր հայ ժողովուրդը, վոր դաբեր շարունակ յինթակա և յեղել ոտար նվաճողների արշավանքներին ու ասպատակություններին, անդադար կոտորվել, կողոպտվել ու գերեվարվել նրանց կողմից, գիտակցել ե, վոր այդ արշավանքների ու ասպատակությունների կազմակերպողը յեղել են վոչ թե պարսիկ, արար, թուրք և այլ աշխատավորները, այլ նրանց թագավորներն ու իշխանները: Հայ շինականն ու ռամիկը, ինչպես և առհասարակ աշխատավոր մասսաները, ամենուրեք և միշտ պատերազմի վրա նայել են վորպես աղետի, վորի համար պատասխանառու յին իշխողները: Նրանք են, վոր հրահրում ու բորբոքում են ազգամիջյան նվաճողական բոլոր կափմւերը:

Հասարակական վերնախավերի (թագավորների ու իշխանների) այդ ձգտումները (պատերազմասիրությունը) շատ ցայտուն կերպով արտահայտված ե հայ ժողովրդական հետեւյալ իմաստուն առածում: «Յոթ դերվիշ մեկ կապերտի տակ կը սթըրվին, յոթ թագավոր վեր յոթ յերկիր չեն սթըրվի»:

Եերբ Դավիթը հարձակվում է Մելիքի բազմամարդ բանակի վրա և աջ ու ձախ սկսում է կոտորել թշնամու զորքը, արաբական բանակից դուրս ե գալիս մի ծերունի զորական և իր իմաստուն խոսքերով աշխատում է համոզել Դավիթին՝ վերջաւ Մելիքի կողմից զորով կովի գաշտ բերգած անմեղ մարդկանց կոտորածին.

«Մեկ մեծ փիր, ալեվոր կար մեջներ,

Մելիք ենոր յոթ տղեն ել զոռովեն բերել եր կոփու-

• •

Վոր Դավիթ ընկավ զորքի մեջ, սկսեց կոտորում,

Եղ մարդ զորքի մեջն վաղեց, եկավ ասաց.

— Դավիթ, մատաղ եմ քու զըլիառն,

Դու ինչի՞ ես մարդեր կը սպանես,

Քու զուշման գո են դաշտի մեջ՝

Զադըր զարկե, նստեր ե,

Են ջոջ չադըր տես ենորն ե:

Եղ զորք Մելիք զոռովեն ե բերե,

Շատեր կան, մորեն մեկ են.

Վոր կա՝ թազա փեսա յե,

Վոր կա՝ ինք մենակ ե, վոչ տղա ունի, վոչ աղջիկ,

Մե կնիկ կա՝ թողե տուն քաղցած եկ,

Եղ շիվարներու մեղաց տակ մի մըտնի.
Վոր դու կտրիճ ես՝ գնա Մելիքի հետ կոիկ արա»:
Ա. 25, 199, 43

Իրեկ ժողովրդի հարազատ զավակ, վորի համար թանգ եւ աշխատավորների կյանքը, անկախ այն բանից, թե ինչ աղդության են պատկանում նրանք, Դավիթը սիրով ունինդրում և արաբ ծերունու խոսքերը և գառնալով նրան ասում.

«—Հալեվոր, դու աղեկ բան ասացիր,
Քու խոսք տ'ենիմ»:

Եղ Դավիթը կատարում և արաբ աշխատավորության ներկայացուցիչ ծերունի զորականի խորհուրդը: Նա անմիջապես՝ ընդհատում և կոտորածը և գիմելով դեպի Մելիքի վրանը՝ իր վեճը լուծում և մենամարտի յենելով և սպանելով նրան: Մելիքին սպանեցուց հետո Դավիթը դառնում և դեպի նրա գորքը և ժողովրդական հերոսին վայել խաղաղասիրական խոսքը ճանապարհ և գնում նրանց իրենց տները.

«Դավիթ ձիու գլոխ կը գարձուցի,
Կերթա զորքի մեջ, կասի,
—Զիզ ամենուդ իզին տվի.
Մեկ-մեկ ձեր տներ գնացեք,
Իմ ջանին աղոթք երեք,
Իմ խորմորն ել ողորմի տվեք»:

Ա. 436.

Արաբ զորականի իմաստուն խոսքերը մի տեսակ պատգամի դեր են խաղում Դավիթի համար: Իր հետագա կոիվներում ևս նա հավատարիմ և մնում այդ պատգամին և կիրառում այն կյանքում:

Այսպես որինակ, յերբ Դավիթի վրա արշավանքի յեկածիապը Ֆրենկիի հակայական բանակը, տեսնելով նրա ահուելի ուժը, փախուստի յեղինում, Դավիթը համոզում է իր առջեկից փախչող թշնամու զորքերին՝ կանգ առնել և ցույց տալ իրեն իրենց թագավորի տեղը, տաելով, վոր ինքը մատգիր չե նրանց սպանելու և վոր իր հաշիվը նրանց թագավորի հետ և.

«Դավիթ կանչեց.—դու մի փախնեք,
Ձեր թագավորի տեղ ինձի ասեք»:

Ա. 464

Յեկ յերբ արարական բանակից հայտնում են, վոր իրենց թագավոր՝ Բաղը Ֆրենկին հանգիստ նստած ե իր քաղաքում, Դավիթը պատերազմի դաշտ և կանչել տալիս նրան, տեղն ու տեղը սպանում և, դառնալով դեպի իր թշնամու զորքն ու ժողովուրդը, ասում:

«Քանի դու ժիր եք, կոիվ միք երթա»:

Ա. 465

Միաժամանակ Դավիթը պատվիրում և նրանց՝ նեղն ընկալու դեպքում իրեն ոգնության կանչել.

«Դոր դու նեղ կընկնեք,

Ինձի թուղթ գրեք, ճամբեք, յես կը դամ»:

(Նույն տեղ)

Ահա թե ինչպես և աշխատավոր հայ ժողովուրդը իր վեպի և նրա գլխավոր հերոսի միջոցով զրսեվորել իրեն համար այնքան թանգ աղգային համերաշխության և խաղաղասիրության գաղափարները:

* * *

Դեպի սեփական հայրենիքն ու ժողովուրդն ունեցած անահանան նվիրվածության և ազգային համերաշխության ու խաղաղասիրության իրենց վառ ձգումների համար «Սասոնցի Դավթի» հերոսները, մամնավորապես՝ Դավիթը, ջերմորեն սիրված են աշխատավոր ժողովրդի կողմից: Իրենց պայքարի մեջ նրանք գտնում են աշխատավորության լրիվ պաշտպանությունն ու ոժանդակությունը: Հանձին կորեկի արտի տեր պառավ կնոջ, ժողովուրդը բոլոր գծվարին ու ճակատագրական մոմենտներին ոգնության և հասնում Դավթին: Իր իմաստուն խորհուրդներով ու հորդորներով պառավ կինը ընթացք և տալիս նրա տարերային ֆիզիկական ուժին: Նա յե առաջին անգամ հայտնում Դավթին Մսրա Մելիքի հարկահանների գալստյան լուրը, նա յե սովորեցնում Դավթին իր հոր զենքերի տեղը... Ժողովուրդը ուշի ուղղվ հետևում և Դավթի և մյուս հերոսների ամեն մի քայլին, սրտանց ուրախանում ու վոգելորվում նրանց հաջողություններով և մտահոգվում ու տիրում նրանց առաջ ծառացած զժվարությունների ժամանակ:

Այսպես, որինակ, յերբ Մըսրում ապրող ջուրհակները լուս էն, վոր Մելիքը մտադիր և սպանել Մեծ Մհերի վորդիներին,

Դավթին ու Մանուկին, անմիջապես հավաքվում են, ժողով առնում և թուղթ ուղարկում Քեռի Թորոսին, վորպեսզի նա շտապիր ոգնության հասնելու վերահաս վտանգի առջև կանգնած իր ազգականներին.

«Քանի մը տուն ջուլհակ կար Մըսրա մեջ.

Եղոնք լսին եղ ձեն, ձուն,
Թէ Քեռի Թորոսի ճժեր պըդի սպանին.

Հերան ուրանք ժողով երեցին,
Թուխտ մի գըեցին Քեռի Թորոսին,
Տվին ջահել տղի մի ձեռ, և ըսին.
—Կերթաս Սասուն, կիդաս Քեռի Թորոսին.

Հիրկուն հասնիս, հիրկուն դա,
Լուսուն հասնիս, լուսուն դա»:

Բ. 273—74

Թորոսը ստանալով ջուլհակների նամակը, շտապում և Մըսր և ազատում Մհերի վորդիներին:

Մի այլ տեղ Խանդութ Խանումի դռնապան Գորդիզը, նկատելով իր տիրուհու ուղնկան քառասուն փահելվանների (կամ յոթ թագավորացների) կողմից՝ հարբած Դավթի դեմ սարքվող գտվադրությունը, զգուշացնում և նրան այդ մասին.

«Յոթ թագավորի տղեկներ
Թրեր քաշին ու կայնան,
Ու պըդի զարկեն թրով Դավթին:
Թագոր Գորգիկ դռնից կանչեց.
— Սան' եր Դավթ, սան' եր Դավթ,
Եղի հարսնքի տուն չե, մահտուն ե,
Ճանձ գլխուցդ ի վերելով կընցնի, գլուխ թոռւ»:

Բ. 83

Եեվ Դավթը լսելով Գորդիզի ձայնը, ուշքի յե գալիս ու հալածում թշնամիներին.

«Դավթիթ հեշբցավ, թուր քաշեց ու թռավ, կայնավ.
Ու իդոնք Դավթի ահուց փախան»:

Բ. 83

Ժողովրդի խոր սերը գեղի իր հերոսները, բացի վերը բեր-ված և բազմաթիվ այլ առարկայական արտահայտություններից՝ ունի նաև իր վոչ պակաս ցայտուն բարոյական արտահայտությունները:

Քերենք մի քանի բնորոշ նմուշներ:

Յերբ Դավիթն իր հրեղեն ձին նստած պատրաստվում է գնալ Մելիքի դեմ կովելու, Սամոն հարսները գալիս են նրա առաջ և յերգով բարի ճանապարհ մաղթում.

«Երթալ քեզ չըլլի,
Դառնալ քեզ ըլլի,
Դառնալ քեզ ըլլի,
Երթալ քեզ չըլլի
Մեր ախակը Դավիթ . . . »

Բ. 1033.

Լսելով Դավիթի հաղթական վերադարձի լուրը, Սասունի գողջ ժողովուրդը, վոր սրտատրոփ սպասում եր նրա գալստյանը, Զենով Հովանի առաջնորդությամբ գնում և նրան գրկարաց դիմավորելու.

«Հովանին ասին.— Դավիթ եկալ:
Հովան ելավ, տի երթա Դավիթի առաջ:
Են գեղական՝ մարդ, կնիկ, հալվոր,
Պառավ, ճիժ-պիժ,
Ամեն գնացին Դավիթի առաջ»:

Ա. 438

Իրենց նախնի և հայրենիքի հիմնադիր՝ Արամելիքի (=Սանասար) մահվան լուրը լսելով, սասունցիք յոթ տարի շարունակ սուր են կապում նրա հետեւից.

«Յոթ տարի Սասուն սուզ մնաց
Արամելիքի մեռնելուց ետեվ»:

Բ. 18

Նույն կերպ նրանք սպում են նաև Սասունը սովից և Մեծ Մելիքի հարկից ազատող Առյուծածե Մհերի մահվանից հետո.

«Մհեր գարձավ, գնաց ուր տուն,
Տարավ ուր ձեռնով թուր զարկեց կար կարասի մեջ,
Կակըծվորավ, կմկիծ տվեց ուր սիրտ ու ենտեղ մեռավ:
Սասունցիք թեռի թորոսին
Բերեցին, զրեցին ուրանց մեծ:
Յոթ տարի սուզ կապեցին Մհերի հետեվ»:

Բ. 62—63

Թե վորքան խորն ու անկեղծ և Սասունցոց կմկիծը, յերկում և այն փաստից, վոր նրանք յոթ տարի շարունակ չեն ամուսնացնում իրենց աղջիկներին ու տղաներին. և պատրաստ

Ան յոթ տարի ևս սուզ պահել յեթե իմանան, վոր Աբամելիքը
կարող ե կենդանանալ.

«Գեղացիք ասեցին.— Քեռի թորոս,
Մըր աղեկնել հալվորան,
Ու մըր աղջրկտիք պառվան.
Թը գու գինաս, թը մըր յոթ տարի սուզ պահելով
Մըր Աբամելիք կը սաղնա,
Յոթ լե ավլի կը պահենք».

Բ. 18

Պակաս անկեղծ և հուզիչ չե նաև Շապի-արքան թագավորի քաղաքում բնակվող Սասունցի ջուհակի սուզը՝ Շապոհի կողմից դավագրաբար հորը նետված Փոքը Մհերի մասին, վորին հանդիպում ե ինքը, հորից աղատված Մհերը, Շապոհի քաղաքում ծպտված շրջելիս.

«Եղ տեղեն ելավ (Մհեր), եկավ քաղքի մեջ:
Եկավ, տեսավ, զոր մեկ ջուլակ հինած կեներ.
Հինած կեներ ու կիլեր:
Հինածի կես սեվ եր, կես սիվտակ եր:
Ու հարցուց թե,— հորի մեկ սև կը հինիս, մեկ սիվտակ
Ու կիլաս հետ:
Գործըրար ըսեց.— Յես Սասունայ իմ.
Մհերին բանեցին, թալին հորու մեջ,
Են արով մեկ սև կը հինիմ, մեկ սիվտակ
Ու կիլամ»:

Բ. 99

Այսպես տարբեր ձևերով ու յերանգներով «Սասունցի Դավթի» մեջ դրսեորփում ե աշխատավոր ժողովրդի անմիջական ու խոր սերը դեպի իր հույսերի ու հույզերի կրող հերոսները:

* * *

«Սասունցի Դավթի», բնչպես և առհասարակ հայ ժողովը դական բանահյուսության, հիմնական ու կարեսը մոտիվներից են նաև աշխատավոր ժողովրդի ձգտումը դեպի ազատությունը, սրա լավատեսությունը կապված իր անառիկ ուժի նկատմամբ ունեցած վստահության գիտակցության հետ:

Առաջին մոտիվի լավագույն որինակը վեպում հանդիսանում է Դավթիթը: Իր վողջ կյանքով ու գործով (հերոսամարտերով ու

սխրագործություններով) նա ձգտում է զեպի աղասությունը և ծառայում դրան։ Առանձնապես ցայտուն ու բնորոշ և այս տեսակետից Մարա Մելիքի տանը գերության մեջ գտնվող մանուկ Դավիթի «յելութը»։ Յերբ Քեսի Թորոսը առաջարկում է Դավիթին անց կենալ Մելիքի թրի տակով, վորպեսզի նա համաձայնվի աղատելու իրեն գերությունից, մանուկ Դավիթը համառորեն հրաժարվում է կատարել Մելիքի կամքը, ասելով.

«Կը սպանե, թող ըսոր սպանե,
Յես ընդրա թրի տակով չըմ ընցնա.
Հըմալ կենե, որ վաղ յիս մեծնամ.
Սուր չքաշեմ ուր վըրեն»։ Բ. 19

Յերկրորդ մոտիվի (ժողովրդի իր անտոիկ ուժի մասին ուսեցած վատահության) բազմաթիվ արտահայտություններից ամենափայլունը «Սասունցի Դավիթ» մեջ հետևյալն է։ Յերբ Զենով Հովանը, տեսնելով թշնամու (Զաշկիկ Սուլթանի) բանակի ուժը, սրդողելով մի պահ դժվարանում և ընտրել իրեն պայքարի ճակատը, Մհերը նախատում է նըան ասելով.

«Հըրոխպեր, բա մենք Սասնա տնեն չենք,
Զե մենք Սասնա տնեն ենք.
Մենք մենանք, մեր գերեզմանի վրա
Թագավորներ չեն կարնա դա.
Քշի, երթանք, մեր կոիմ անենք»։

Բ. 44

* * *

«Սասունցի Դավիթ» մեջ վիպական բնորոշ գծերով արտահայտված և միշնադարյան Հայաստանի (և վոչ միայն միշնադարյան) սոցիալ-տնտեսական կյանքի իրական պատկերը՝ իշխող դասերի և աշխատավոր ժողովրդի փոխհարաբերությունների ճշմարտապատում նկարագիրը։ Վեպի տարբեր պատումներում մենք գտնում ենք բավական նյութ հասարակության շերտավորման՝ դասային առանձնահատկությունների, ազնվականության արտոնությունների և ուսմիկ ժողովրդի ծանր վիճակի մասին։ «Սասունցի Դավիթ» մեջ հիշված իշխող դասակարգերի ներկայացուցիչները (թագավոր, իշխան, ոհս, վարդապետ, քահանա և այլն) իրենց կեցությամբ և սոցիալական եյությամբ հակառը վում են վեպում յերեվան յեկող աշխատավորության ներկայացուցիչներին (արտատեր աղքատ պառավ, գութանակուներ, ջուլ-

Հակ և այն): Մինչը եռ տուաջինները վայելում են ուրիշի աշխատանքի արդյունքը՝ շահագործելով ու կեղեցելով, վերջինները ապրում են դժվարին և չարքաշ կյանքով, որն ի բուն աշխատելով և բնության տարերքի դեմ կռվելով։ Հասարակական հիշյալ յերկու բանակների հակագործելով շատ ցայտուն կերպով արտահայտված են՝ Սասունցի Դավիթի և Մորա Մելիքի կրպարների մեջ։ Դավիթը վեպում յերեան և գալիս իբրև մի տքնաշան աշխատավոր և շինարար մարդ։ Մանկութ նա սկսում է աշխատել՝ նախ իբրև գառնարած, ապա հորթարած, նետո նախրորդ կամ վորսորդ։ Դավիթը սիրում և աշխատանքը չնայած զբա գժվարություններին։ Յերբ Զենով Հովանը առաջարկում է նրան պարապ չմնալու համար հանձն առնել գյուղի նախրորդի պաշտոնը, Դավիթը ընդունում և այս։ Խակ պատումներից մի յերկուսում, նկատելով իրենց ընտանիքի նյութական ծանր պայմանները, Դավիթն ինքն և առաջարկում Քեռի Թորոսին՝ իրեն և առան մյուս յերեխաններին աշխատանքի դնել։

«Եդ տարին գարուն թաժա բայցեր ա,

Դավիթ ըսեց. — Քեռի, գարուն ա.

Հողախ, մըշկու վախտ ա, ըունչպըռու վախտ ա,

Մենք քառուն ջանով լըցվեր ինք իդա տուն,

Խո, գու պարտազան չմս, մըզի զըմեն պայիս:

Հելի, մըզի տուր հորթարած, նախրորդ, հովիվ, մշակ,

Դատինք, աշունք բերինք մըր աշխատանք,

Քոմմինք վիրարու, ուղինք, ապրինք»։

Բ. 275

Բնորոշ են նաև Դավիթին իբրև շինարար հերոսի բնութագրող փաստերը (տես՝ Մարութա վանքի վերաշնուրումը, սասունցոց համար կամուրջ կառուցելը և այլն)։

Բոլորովին այլ բնութագիր ունի վիպում Մորա Մելիքը։ Յերեւ իշխող դասակարգի ներկայացուցիչ նա հեռու յե աշխատանքից և վայելում ե ուրիշի վաստակի պտուղները։ Հակառակ Դավիթին, Մելիքը յերեան և գալիս իբրև մի բռնակալ — տիրան, վոր հարկահաններ և ուղարկում Սասուն՝ յոթ տարվա հարկը բերելու, կարգադրում իր ստորագրյալներին գնալ և ավերել սասունցոց սրբատեղին, կամ զորահավաք հայտարարելով՝ պատերազմի յե զուրս գալիս իր հարկապահանջության լուծը թոթափելու, վորձ անող սասունցիների դեմ։ Ահա այն «աշխատանքները», վոր կատարում և վեպում Մելիքը։ Այդ «աշխատանքները»

Ներիք մեջ կարևոր տեղ է բռնում նաև նրա յոթորյա քունը՝
վոր վիպական բնորոշ գծերով և նկարագրված մի շարք պա-
տումներում.

«Դավիթ քշեց իր ձին, գընաց,
Մելքի վրանի դուռ կայնավ.
Տեսալ Մելքի իր չաղլի տակ,
Մեջ վերմակին կոլոնված՝ պառկե:
Յոթ աղջիկ ենոր չորս դին նստե՞ ճանձ կըքշեն,
Յոթ աղջիկ իր վոտ կը մաժեն,
Երկու արար ծառայող ել դռան կանդնած»:

Ա. 431

Դավթի և Մելքիի նման՝ հասարակական տարբեր բանակ-
ների ներկայացուցիչներ են նաև վեպի մյուս գլխավոր և յերկ-
րորդական գործող անձերը—Սանասարն ու բաղդասարը, Առյու-
ծածի Մհերը, Փոքր Մհերը մի կողմից, և Բաղդադի խալիֆան,
Բապը Ֆրենկին, Շապուհ արքան և այն մյուս կողմից: Մինչդեռ
առաջինները վեպում ցույց են տրված իրեն գործի մարդիկ, աշ-
խատանք սիրողներ (Սանասարն ու Բաղդասարը սեփական ձեռքե-
րով կառուցում են վոչ միայն իրենց բերդ-բնակարանը, այլև
քառասուն տուն աղքատների համար, Առյուծածի Մհերը զբաղ-
վում է վորսորդությամբ և յոթ տարի փարսով կերակրում սա-
սունցիներին, Փոքր Մհերը մերթ հանգես և գալիս իրեն քահա-
նայի մշակ, մերթ իրեն գինվոր, մերթ իրեն քառասուն փահճե-
վան յեղբայրների համար հաց թխող և այն և այն), վերջին-
ները՝ շահագործող, բռնակալ անաշխատ ու պատերազմաներ-
մարդիկ են: Բաղդադի խալիֆան Մարա Մելքի նման պարբե-
րաբար արշավանքներ և կազմակերպում չայսատանի վրա՝ ժո-
ղովրդին հարկադրելու ու կողոպտելու նպատակով, Շապուհ ար-
քան և Բապը Ֆրենկին Խանդութին տիրանալու նպատակով Դավ-
թի դեմ պատերազմի դաշտ են գուրս բերում իրենց յերկրի
աշխատավոր ժողովրդին և կոտորել տալիս նրանց և այն:

Պակաս բնորոշ չեն այս տեսակետից և վեպի դավթյան-
ճյուղի մի շարք պատումներում յերեան յեկող՝ Գործոթա ուսի և
կորեկի արտատեր պառավի տիպերը: Մեկն իրեն շահագործող—
անաշխատ դասակարգի ներկայացուցիչ, վորն ունի մեծ քանա-
կությամբ հող, վորի վրա աշխատում և վոչ թե ինքը, այլ
նրա վարձու մշակները, մյուսն իրեն գյուղական չքավորու-
թյան ներկայացուցիչ, վոր սեփական ձեռքերով մշակում և իր-

31

փոքրիկ հողամասը (կորեկի կտմ շաղդամի արտը), հազիվ հազ կարողանալով հայթայթել իր ընտանիքի գոյության պահպանման համար անհրաժեշտ ապրուստի միջոցները:

Աշխարհիկ շահագործողների հետ «Սասունցի Դավթի» մեջ հանդես են գալիս նաև հոգևոր տերերը: Իրենց սոցիալական եյտությամբ դրանք շատ քիչ են տարբերվում առաջիններից: Իրենց շահերով, աշխարհիկ շահագործողների նման, դրանք հակագրվում են աշխատավորությանը և նրա սիրելի հերոսներին: Այս տեսակետից բնորոշ են Մարտութա վանքի միաբաններից՝ Ոհան Աղբակեցու և Սասունի ճանապարհին գտնվող Մատղավանքի վանահոր տիպերը:

Առաջինն իրեւ մի կաշառակեր անձնավորություն, վոր խարպելով Նողագոնի խոստումներից անցնում և նրա կողմը և ծախում յուրայիններին, իսկ յերկրորդն իրեւ մի դավաճան, վոր դավադրաբար թշնամիների ձեռքն և մատնում Փոքր Մհերին:

Սակայն, վեպը չի բավականանում միայն հասարակական տարբեր դասակարգերի ներկայացուցիչների բնութագիրը տալով և նրանց գործունեյության պասսիվ նկարագրով: Նա, բավական բնորոշ գծերով հակադրելով դրանց իրար, տալիս եայն պայքարը, վոր մղում և աշխատավորությունը աշխարհիկ ու հոգեվոր շահագործողների գեմ:

«Սասունցի Դավթի» հերոսների համար հավասարապես ատելի յեն բոլոր տիպի շահագործողները, անկախ նրանց տեսակից ու ազգությունից, և ընդհակառակը սիրելի յեւ աշխատավորությունը՝ ինչ ազգից ել լինի դա: Այլ և պատճառն ահա, վոր նրանք կովելով այլազգի ոտար շահագործողների գեմ, միաժամանակ կովում են նաև սեփական շահագործողների գեմ, և ընդհակառակը՝ պաշտպանելով ու հովանավորելով յուրայիններին, պաշտպանում ու հովանավորում են նաև այլ ազգի աշխատավորներին:

Այսպես որինակ, մի տեղ Դավիթը Բապը Թրենկին սպանելուց հետո, սպանում և նաև նրա քաղաքի «ջոջ» մարդկանց և նրանց տեղը «պստիկներին» նշանակում.

«Մնացողը, քաղքի մեջ վոր մնացել ե,
Դավիթ ենոնց խամար թագավոր կը դնի.
Զաթի ջոջ մարդեր կը սպանի,
Պստիկներ տեղ կը դնի»:

Ա. 465

«Զոյ» և «պստիկ» բառերի տակ վեպն այստեղ անշուշտ նկատի ունի հասարակության վերին և ստորին խավերի ներկայացուցիչներին: Մի այլ տեղ Փոքը Մհերը կովելով Շապուհ արքայի գեմ և սպանելով, նրա փոխարեն թագավոր և կարգում սասունցի չքավոր ջուլհակին:

«Ու զարկեց, Շաբի - արքանի գլոխ կտրեց:
Եղ տեղեն գնաց, հորու վրեն կայնավ.
Պառավն ու ուր յոթ ախչիկ հորու միջն հանեց,
Բերեց զործըրարի կուշտ.
Առավ զործըրար լի հետ,
Եկավ Շաբի - արքանի դիվան:
Պառվու պստիկ ախչիկ տվեց ջուլակին,
Ու ջուլակ դրեց թադավոր Շաբի - արքանի տեղ»:

Բ. 100

Վոչ պակաս ցայտուն են նաև այն գատաստանները, վոր կատարում են Դավիթն ու Մհերը վերեւու հիշված դավաճան և կաշառակեր վանականների նկատմամբ: Անա թե ինչ է պատմում վեպն այդ մասին:

«Ղողբագինը վանքը կողոպտում ե և միաբաններին կոտորում. միայն մի սարկավագ ազատվելով՝ փախչում է Դավիթին պատմելու յեղելությունը: Դավիթը կեր ու խում ուներ, յերբ սարկավագը ներս է մտնում.

«Դավիթ նստի հացն ու գինին,
Եկան խարին Ոհան Աղբակեցին,
Քառսուն երեց սպաննեցին,
Քառսուն վարդապետ, քառսուն սարգեվաք»:

Դավիթը, լսելով սարկավագի խոսքերը, խկույն վազում է թշնամիների հետեւից, Ոհան Աղբակեցուն յերկու կտոր և անում, իսկ Ղողբագինին, ատամները ճակատին շարելով, ուղարկում ե Մսրա Մելիքին . . . »:

Բ. 72

Դավիթից հետ չի մնում և Մհերը: Մատղավանքի վանահօր հրավերով վանքը պաշարած Դավիթի թշնամի յոթ թագավորների զորքի հետ իր հաշիվը վերջացնելուց հետո, նա գալիս է վանք և

«Մեկ ձեռքով վերուց վանքի սուն,
Մեկելով բռնեց վանահօր բռչմից,
Գլուխ դրեց սան տակ,

Սուն թողուց վեր դլխուն, ասայ.
— Ես վանքի անունը ըստուց յետ՝
Մատղավանք չպիտի ըլնի,
Մատնավանք պիտի ըլնի,
Չունքի որ վանահեր մատնութեն երեց»:

Բ. 871

Սակայն, անձրաժեշտ է նշել, վոր «Սասունցի Դավթի» մեջ սոցիալական պայքարն ընդհանրապես և աշխատավորության՝ իր ներքին շահագործողների դեմ մղած սոցիալական պայքարը մասնավորաբար համեմատաբար քիչ ու թույլ ե արտահայտված։ Յել դա ունի իր խորը պատճառները։ Այն շրջանում (7—10 դարեր), յերբ ստեղծվել ու ձևավորվել ե վեպը, հայ ժողովրդի հիմնական ուշադրությունն ու վողջ ուժը կենտրոնացած ե յեղել արտաքին նվաճողների (արաբական խալիֆաթ) դեմ մղած ազգային ազատագրական պայքարի ճակատում, մի ճակատ, վորտեղ ժողովրդի հետ, սակայն բոլորովին տարբեր գասակարգային միտումներով, ընդհանուր ֆրոնտով պայքարել և նաև հայ ազնը վականությունը։ Ահա թե ինչու, մեր կարծիքով, «Սասունցի Դավթը», իբրև հայ ժողովրդի պատմական կյանքի հիշյալ շրջանի կենդանի վավերազիր՝ համեմատաբար թույլ ե արտացոլել հայ աշխատավորության դասակարգային պայքարն իր ներքին տերերի դեմ և, ընդհակառակը, այնքան վառ ու գունեղ ե պատկերել նրա ազգային ազատագրական պայքարը ոտար նվաճողների դեմ։

6.

Պատմական իրադարձությունների, ժողովրդի գաղափարների, ձկութանքների ու սոցիալական կյանքի գեղարվեստական վերաբարձրության հետ, «Սասունցի Դավթի» մեջ մենք գտնում ենք նաև աշխատավոր ժողովրդի (շինական և ռամիկ դասի) աշխատանքային-արտադրական կյանքի, կննցալի, սովորությունների և հավատալիքների բավական մանրամասն նկարագիրը։

Այստեսանբային-արտադրական կյանք։ Իբրև ժողովրդի գլխավոր զբաղմունք «Սասունցի Դավթի» մեջ յերեան և գալիս նախ և առաջ անասնապահությունը։ Դա յե, ըստ վեպի, Սասունի և գյուղացոց և քաղաքի բնակչության պարապմունքի հիմնական առարկան։ «Մեր երկիրն վար ու ցանք չունինք, մենք եծ ու եշ ու ջորի կը պախենք. մեր հաց չալապա ու Շամա գուքա»

(Բ. 145), ասում ե վեպի գործող անձերից մեկը մի առթիվ:
վեպի կենտրոնական դեմքը՝ Դավիթը, բոլոր պատումներում հանդես ե գալիս վորպես գառնարած, հորթարած կամ նախորդ: Նա պահում, արածացնում ե իր հայրենակիցների նախիրը: Սասունցոց անասնապահ լինելու ժամին հիշատակություններ կան նաև վեպի մյուս ճյուղերում:

Սասունի աշխատավոր գյուղացիության զբաղմունքի յերկրորդ կարևոր առարկան, վոր արձագանք ե գտել վեպում, ու վորսորդությունն ե: Վորսով են պարապում եպոսի գլխավոր հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Մհերը, Դավիթը և այլն: Վորսորդությունը նրանց համար նախ և առաջ ապրուստի և հագուստի միջոց ե: Հստ մի յերկու պատումների՝ Մեծ Մհերը վորսով յոթ տարի շարունակ կերակրում ե Սասունը.

«Մհեր կը բերեր իր վորս»

Սասունցոց վերեն կը ցըվեր.

Յոթ տարի Սասուն պահեց վորսով»:

Իբրև վորսի գլխավոր կենդանիներ հիշվում են՝ նապաստակ, աղվես, կուգ և այլն, վորոնց վորսալու սովորությունը՝ Դավիթի ժամանակից և մնում:

«Դավիթ լապտրակնիր, աղվիմնիր, կուզիր
ժողվից, առից, իսկի, ելից մանչ քաղքին:
Քաղքցիք եւան չոկցցին ուրանց գառնիր, տարան:
Ամեն մեկ ինչքանդար կպեր,
Լապտրակ, աղվիս, կուգ՝ տարան խիտ:
Լապտրակ զինիցին խետ ուլիրուն, կերան.
Աղվիս, կուգ երին քուրք, խագան,—
Են վրխտեն լապտրակն ել չուր միա ել
Հա կը զինին, հա կուտին.
Աղվիս, կուգ կենին քուրք՝ խագնին»:

Ա. 179

Անասնապահության և վորսորդության հետ «Սասունցի Դավիթի» մեջ ուղղակի և անուղղակի տվյալներ կան նաև գյուղատնտեսության մի քանի այլ ճյուղերի (յերկրագործություն, այգեգործություն և այլն) վերաբերյալ Դավիթի ճյուղի համարյաբուրու պատումներում հիշվում ե կորեկի կամ շաղգամի մշակության ժամին (տես Կոբեկի կամ շաղգամի արտի տեր աղքատ պառավի կամ հալեվորի հատվածը): Եույն ճյուղի մի քանի այլ

պատումներում հիշվում և ցորենի և այլնի մշակության մասին» (տես՝ Գործոթա ռեսի և նրա գութանավորների հատվածը):

«Սասունցի Դավթի» տարբեր ճյուղերում մենք հիշատակություններ ենք գտնում նաև արհեստների վերաբերյալ: «Փոքր Մհեր» ճյուղի մի շարք պատումներում, որինակ, յերևան են գալիս Մըսրում ապրող սասունցի ջուհակներ, մի յերկու տեղ կանգարբիններ և այլն:

Ինչպես զյուղատնտեսության, նույնպիս և արհեստների մասին յեղած գերոհիշյալ և բազմաթիվ այլ տեղեկություններ լիովին համապատասխանում են առհասարակ հայ աշխատավոր գյուղացիության և մասնավորապես սասունցոց աշխատանքային-արտադրական կյանքին:

Այսպես, յեթե վորսորդությունը, կորեկի և շաղգամի ու այլ մշակությունները բնորոշ են սասունցոց համար, ապա անասնապահությունը ցորենի և այլ հացանատիկների մշակությունը հատուկ և յեղել Հայաստանի շատ շրջաններին: Տարածված լինելով բազմաթիվ վայրերում, «Սասունցի Դավթը» ժամանակի ընթացքում իր մեջ և առել այդ վայրերի ազգաբնակության աշխատանքային-արտադրական կյանքի շատ գծեր:

Կենցաղ, սպառաւրյաններ ու նախատալիքներ. — «Սասունցի Դավթի» մեջ շատ բնորոշ գծերով յերևան և գալիս նաև ժողովրդի (աշխատավոր զյուղացիության) կենցաղը, նրա սովորություններն ու հավատալիքները (ծնունդ, մանկություն, նշանգրեք, ամուսնություն, հարսանիք, մահ, թաղում, ուխտագնացություն, սրբերի պաշտամունք, «ցաման ժամ» և այլն)¹⁾:

Վիպական առասպեկտական մասիններ. — Ունենալով բուն պատճական հիմք ու ատաղձ, «Սասունցի Դավթը», ժամանակի ընթացքում սերունդից սերունդ բանավոր ավանդվելով, իր մեջ և առել բազմաթիվ հեքիաթային, վիպական և առասպեկտական մոտիվներ: Այդ մոտիվների մի զգալի մասը վեպի մեջ մուտք է գործել հայ ժողովրդական առասպեկտներից ու հեքիաթներից, մյուս մասը՝ հարեվան ժողովրդների փոլկորից: Դրանց շարքին են պատկանում, որինակ, ներունիքի ջրային ծնունդը, կոփկը վիշապների ու գեղվերի գեմ, գերբնական նղորացումը, քարայրներում փակվելը և այլն և այլն²⁾:

^{1, 2)}ՏԵՌ՝ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական Հանդես» գիրք XIV, էջ 51—57, գիրք XVI, էջ 103—117, գիրք XVII, էջ 5—36:

«Սասունցի Դավթի» արտահայտչական միջոցները (լեզու, վոճ, պատկերներ, վոտանավոր և այլն) վերցված են հայ ժողովրդական բանահյուսության բազմադարյան հարուստ գանձարանից: Դրանք հարագատորեն վերարտագրում են վեպի հերոսական-դյուցազնական եյությունը և ժողովրդական-աշխատավորական վոգին:

«Սասունցի Դավթը» ստեղծվել և գարերի ընթացքում պատմվել ե աշխատավորական խավերին հասկանալի, նրանց հարազատ կենդանի խոսակցական լեզվով, ժողովրդական բարբառներով:

Վեպի ներկայումս մեր ձեռքի տակ լեզած տպագրված ու անտիպ պատումները (թվով 50 հատ) իրենց լեզվական-բարբառային առանձնահատկություններով բաժանվում են չորս հիմնական խմբերի՝

ա) Վանա բարբառով ու յենթաբարբառներով (Մոկաց, Շատախի, Նարեկի, Կանեթի և այլն) պատումներ:

բ) Տարոնի-Մշու բարբառով ու յենթաբարբառներով (Մասուն, Խլաթ, Ալաշկերտ, Ապարան, Նոր-Բայազետ և այլն) պատումներ:

գ) Պարսկահայոց բարբառով պատումներ:

դ) Արևելահայ բարբառով պատումներ:

«Սասունցի Դավթի» լեզուն իրեն ժողովրդական լեզու առնուն և, ազատ և շարժուն, լիարյուն ու ձկուն: Նա համեմված և ժողովրդական սրամիտ ու դիպուկ առածներով ու ասացվածքներով, անեծքներով ու որհնանքներով, վորոնք հագեցված են կենցաղային, սոցիալական խորը բովանդակությամբ: Այդ առածների ու ասացվածքների, անեծքների ու որհնանքների միջոցով մեր վիպասաններն արտահայտում են իրենց գրական կամ բացասական վերաբերմունքը վեպի գործող անձանց նկատմամբ, տալիս վերջիններիս ընութագիրն ու գնահատականը: Այսպես, որինակ, բացահայտելու համար նահապետական ընտանիքի ներսում գոյություն ունեցող կող և մարդու փոխարարերությունը՝ կող խոնար և համեստ, իր ամուսնուն հրու հնազանդ վիճակը, վիպասաններից մեկը գործ և ածում՝ «տղամարդ վոր կա՝ զլուխ ե. կնիկ վոր կա՝ զոտ ե» ժողովրդական տարածված առածը: Մեկ ուրիշ վիպասան Խանությունի արիությունն ու ուժը

բնորոշելիս հիշում ե՝ «Ծեր շեր ա, չը ժը՞ն ա չը մեր ա» (Առյօւծն առյօւծ ե՝ եզ, թե վորձ) քրդական հայտնի առածը: Մի յերրորդը, գութանավորների բերանով Դավթին բարի ճանապարհ մաղթելիս, ժողովրդական վողջերթ-որնանքի հետևյալ ընդունված բանաձեն և ուղղում նրան՝ «վորտեղ վոր կերթաս, քու վոտ քարին չը դիսնի» և այսպես շարունակ: Պակաս գունեղ ու բնորոշ չեն նաև «Սասունցի Դավթի» մեջ գործածված ժողովրդական մակդիբներն ու ածականները: Դրանք պատկերավոր ու գեղեցիկ ընութագրում են վեպում յերևան յեկող մարդկանց իրերի և առարկաների արտաքին ու ներքին հատկանիշները: Այսպես, որինակ, Դավթի հորեղբայրներից մեկը ունի «Զենով» մակդիբը, վորովհետև ոժտված և անսովոր բարձր ձախով, մյուսին զարդարում և «Յուան» ածականը—նրա ծայրահեղ վախկոտության համար: Դավթի քեռին (Թորոս) մի շարք պատումներում հիշվում ե Թեւաթորոս ձեռվ, «Թեւան» նրա մակդիբն և (թեւավոր) և ցույց և տալիս Թորոսի արագաշարժությունն ու ճարպկությունը: Դավթի հայրը՝ Մեծ Մհերը, փորոշ պատումներում հիշվում է իրեւ Առյօւծաձև Մհեր: «Առյօւծաձև» մակդիբը նա ստանում և ժողովրդի կողմից՝ Սասունը հարևան յերկրների հետ կապող ճանապարհին լույս ընկած առյօւծին սպանելու առթիվ: Դավթի թուրը, վոր նա ժառանգաբար ստանում ե իր հորից, կրում և «Կայծակի» կամ «Կայծակեղեն» մակդիբը, վոր ակնարկում ե նրա հրեղեն և յությունը: Բացի այս և մի շարք այլ մշտական կամ կայուն մակդիբներից (Դեղձուն Շամ, Վեցոտնեն Լաղդի և այլն), «Սասունցի Դավթի» բանաստեղծական լեզվի մեջ տեղին և ժամանակին գործ են ածվում նաև բաղմաթիլ այլ վոչ պակաս դունեղ ու գեղեցիկ մակդիբներ ու ածականներ (վաչ մշտական կամ կայուն): Որինակ՝ կանաչ կտրիչ, քաղցրիկ մերիկ, մարդակեր պառավ, սվտկամորուս կամ թուխմորոս մարդ և այլն և այլն: Քիչ չեն վեպում նաև նվազականները (ձեռնիկ, աչկիկ, դուրզիկ, սրտիկ, Թորոսիկ):

Հայկական եպոսի վոճական տարրերից մեկն ել ժողովրդական առողջ յերգիծանքն ե, վոր մի տեսակ զվարթությունն է հաղորդում վեպին: Այդ յերգիծանքը մեղմ ե ու բարեկամական, յերբ վերաբերում ե յուրայիններին և խիստ ու խայթող, յերբ ուղղված ե թշնամինների գեմ: Վեպը ծայրե ի ծայր համեմված ե Սամանա ծոերի տարորինակ արարքներին վերաբերող բարի հումորով (տես՝ Ծուռ կամ Դարձ Բաղդասարի հարբելը Ախմա-

խու սարում, Մեծ Մհերի՝ վոտները կապած քուռակին ուսն առած տանելը, պատանի Դավթի՝ իր ընկեր նախըրորդների համար գյուղից հարիսս բերելը, Փոքր Մհերի մանուկ հասակում Սասնո գետի վրա կամուրջ կապելը և այն և այլն):

Քիչ չեն վեպում նաև խայթող յերգիծանքի որինակները (տես Զենով Հովանի կնոջ Սարիայի կամ Վերդոյի ծաղրը ուղղված Մելիքի դեմ կրվի զնացող Դավթի հասցեյին և վերջինիս պատասխանը կրվից վերադառնալուց հետո, Մորա կանանց ծաղրը ուղղված Սասուն գնացող և այնտեղից զատարկածեռն ու պատուհասված վերադարձող գոռող Կողբաղնին և այն և այլն):

«Սասունցի Դավթի» բանաստեղծական լեզվի կարևոր արժանիքներից են նաև նրա պատկերավորությունը: Վեպը համեմած ված և կենդանի ու գունեղ գեղարվեստական պատկերներով, համեմատություններով ու նմանություններով: Ճիշտ և, քանակով զրանք շատ չեն, բայց իրենց վորակով չեն զիջում մեր ժողովրդական բանահյուսության մյուս տեսակներում, հատկապես ժողովրդական սիրո յերգերում գործածվող հիանալի պատկերներին: «Սասունցի Դավթի» պատկերների համար նյութ են ծառայում վեպի գործող անձանց արտաքինի ու ներքինի նկարագիրը, նրանց շրջապատի ընտանեկան և հասարակական կյանքի բազմապիսի յերևույթները, ժողովրդական կենցաղն ու հավատալիքները, բնությունը և այն և այլն: «Սասունցի Դավթի» պատկերավոր կտորների մեջ աչքի յե զարնում աշուղների գովրը Դավթի հարսնացու՝ գեղեցկունի Խանդութ Խանումի մասին: Միքանի վարիանտներում այդ գովրը իր պատկերաշարով հասնում է գեղարվեստական բարձր կատարելության: Այսպես, որինակ, վիպասաններից մեկը Դավթի առաջ Խանդութ Խանումի գովրն անելով, ասում ե.

«Տասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր բոյ գյուղու եղիդ նման եր:

Տասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր սրտիկ Թուռկիկ Զարալու մեյդանն եր:

Տասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր աչքեր գինու կթիսայ եր» . . .

Ա., 918, 1068

Մի ուրիշը .

«Կ'իրիշկեմ՝ Խանդութ խանում, ձեռվոտ կալամով
քաշած ե,
Ա՛լի հալա տըզո, կալամով քաշած ե.

Կ'իրիշկեմ՝ եղոր եղնգներ ռանդայով տաշած ե,
Ա՛լս հալա տըզո, ռանդայով տաշած ե.
Կ'իրիշկեմ՝ երեսի կարմըութեն, նռան գինի ե,
Ա՛լս, հալա տըզո նռան գինի ե.
Կ'իրիշկեմ՝ ենոր սիպտկութեն, գչած բամբակ ե,
Ա՛լս, հալա տըզո գզած բամբակ ե» . . .

Ա. 205

Մի յերբորգը՝

«Հնդրա աչքի թարթփներ ասեմ,
Կռնկի թեվունման ե, լզո, մե չափ ավելի.
Հնդրա սիպտկութեն ասեմ,
Քանց մեկ որվա գալած ձռւն սիպտակ ե, լզո, սիպ-
ապկ ե . . .

Ա. 679, Բ. 1052

Պատկերավոր ու գեղեցիկ ե մի քանի պատումներում նաև
Դավթի պատասխան-յերգը գուսաններին, վորտեղ նա գունեղ ու
յուրորինակ համեմատություններով ու նմանություններով բաւ-
ցահայտում ե գուսաններին՝ Խանդութի բարեմասնությունների
մասին նրանց գովքը լսելուց հետո իր ներսում կատարված մեծ
հեղաշրջումը։ Անա այդ պատասխան յերգելից մեկը.

«Փուսաններ, զու բարով եկաք.
Իմ սիրտ քանց կաթն անարատ եր,
Մերան թալիք մակարդիք:
Իմ սիրտ քանց Սամնա բերդն ամուր եր,
Քլունդ առաք, իմ հիմ քանդեցիք.
Իմ սիրտ քանց աշունքվա գետ զուլալ եր,
Դարնան սելավի նման պղտորիք»։

Ա. 284., Բ. 1055

«Սասունցի Դավթի» լավագույն պատկերավոր կտորնե-
րից ե պատանի Դավթի՝ Մելիքի անթիվ ու անհամար զորքի
առաջ մի պահ սրգողելու մոմենտի նկարագիրը։ Անա թե ինչպես
ե արտահայտում Դավթին պաշարած ըսպեյական վախի այդ
զգացումը մեր ամենաշնորհալի գեղջուկ վիպասաններից մեկը՝
Մոկացի Նախո Քեսին։

«Դավթիթ ձին իսեծավ, քշեց, դնաց,
Ելալ Լեռա սարի գլուխ:
Ինչ կը առանա, — իրիշկեց՝
Վոր քանի մ'աստղ երկինք կա,

Մարտ Մելիք ընցկուն չաղըր — խեվաթ զարկած ի
 մընչ դաշտին:
 Դավիթ վոր տեսավ՝ վախացավ, ասաց.
 Որհնա՛լ, բարերար աստված,
 Քո հրամանաքն և շատ.
 Յես ի՞նչըի անեմ:
 Ենոնք ելնեն բամբակ (ե՛ր),
 Յես լե ելնեմ կրակ (ե՛ր),
 Զեմ կարա զանոնք երեցըի.
 Ենոնք ելնեն զարնան մատղաշ գառներ
 Յես լե ելնեմ զարնան քաղցած գելեր,
 Զեմ կարա զանոնք կտրեցըի»:

Ա. 24

Նույն մոմենտի նկարագիրը այլ ասացողների մոտ արտահայտված եր բոլորովին այլ ատաղձ ու կոլորիտ ունեցող պատկերներով ու համեմատություններով:

Նման համեմատաբար մեծ ու ամբողջական պատկերավոր կտորների հետ «Սասունցի Դավթի» մեջ մենք հանդիպում ենք նաև առանձին ծալվալով փոքր, սակայն վոչ պակաս գեղեցիկ պատկերագոր արտահայտություններ, տողեր ու յերկտողեր (թշնամու վրանների համեմատությունը յերկնքի աստղերի կամ ծովի ավաղների հետ, ձիավոր Մհերի համեմատությունը սարի վրա բարձրացած սարի կամ ամրօցի հետ, Դավթի կողմից թշնամու գորքերին կոտորելու համեմատությունը՝ հասած արար փշացնող կարկուտի հետ և այլն և այլն):

Հայ ժողովրդական վեպի, ինչպես և առասարակ ժողովրդական վեպերի, արտահայտչական միջոցների մեջ կարեոր տեղ ունի չափազանցությունը (հիպերբոլան): Վերջինս մեր վեպի ամենառութեղ ու ազգեցիկ արտահայտչական միջոցներից եւ: Իրենց սիրելի դյուցազուն հերոսներին գովերգելու և իրեալականացնելու, նրանց կատարած սիրագործությունները վառ կերպով ցուցադրելու համար մեր ժողովրդական վիպասանները առատորեն կիրառում են հիպերբոլան, արտահայտելով դրա մեջ ժողովրդի ուժի ու հզորության գաղափարը: «Սասունցի Դավթի» մեջ չափազանցած են նախ և առաջ հերոսները (Սանասար, Մեծ Մհեր, Դավթիթ, Փոքր Մհեր և այլն) իրենց անսովոր ֆիզիկական ուժով ու խիզախությամբ, նրանք մենակ կովում են զանազան գերբը նական եյակների ու զաղանների (առյուծ, ղեվ, վիշապ և այլն),

թշնամու հազարավոր զորքերի գեմ և կարծ ժամանակում ու հեշտությամբ վոհնչացնում նրանց (տես Սանասարի⁵ վիշտին սպանելը, Մեծ Մհերի առյուծին ձևելը, Դավթի կրիվը Մելիքի և Խանդութի հոր թշնամիների (Բաղը Ֆրենկի և այլն) բազմամբոխ բանակների գեմ, Փոքը Մհերի կրիվը մարդակեր պառավի, Կուտք գեմ գեմ և այլն և այլն): Այսուհետեւ, չափազանցված են հերոսների ծիերը (Քուլիկի Զալալին, Վեցոտնեն Լազգին, Կապուտ Ճին և այլն), իրենց անսովոր արագագնացությամբ, ուժով ու դիմացկունությամբ նրանք իրենց տերերի հետ հավասար կավում են թշնամիների գեմ և կոտորում (պոչով, շնչով վոտներով և այլն), հարկավոր գեպքում լեզու յեն առնում ու խոսում, փրկում իրենց տերերին գժվարին մոմենտներին: Չափազանցված են հերոսների գործածած զենքերի (թուր, գուրգ և այլն) հատկությունները, մասնավորապես Թուր Կայծակին, վոր կըսորում և պողպատե սյունը, 40 ջրազացի քարը և այլն: Չափազանցված են դեպքերը—կրիվ, մենամարտ, մրցումներ և այլն: Չափազանցության վրա յե կառուցված նաև հերոսների հաղուստների, զրահների նկարագիրը, վեպում յերեան յեկող կանանց (Պահպութ, Գոհար և այլն) արտաքին գեղեցկությունները և այլն և այլն:

Չափազանցության հարակից արտահայտչական բավական ուժեղ մի միջոց և և հակադրությունը (կոնտրաստ), վոր նույնապես առատորեն կիրառված և մեր վեպում: «Սասունցի Դավթի» մեջ կողք կողքի հանդես են գալիս՝ լավն ու վատը, չարն ու բարին, յերեակայականն ու իրականը: Յեթե Մելիքը չար և ու դաժան, ապա Դավթիթը բարի յե ու մեղմ: Յեթե Վերգոն վախկոտ և ու տմարդի, ապա Թեոփ Թորոսը քաջ և, մեծանոցի և այլն: Հակադրելով իրար զբականն ու բացասականը ժողովրդական վիպասանները գրանով իսկ ավելի յեն ընդգծում առաջինի առավելությունները: Հակադրությամբ նրանք հասնում են նույն նպատակին, ինչ և չափազանցությամբ—այն և ժողովրդին սիրելի հերոսների գովերդ ու իգեալականացում:

Հայ ժողովրդական վեպի գեղարվեստական հիմնական արժամականիքներից մեկը նրա դինամիզմն է: Վեպի մեջ շատ քիչ են նկարագրական կտորները. սյուժեն ծավալվում և զարգանում և մեծ արագությամբ իրար հաջորդող և փոփոխվող գործողություններով: Հերոսների բնավորությունները, նրանց ներքին

ապրումները բացահայտվում են վոչ թե պատմելով կամ նկարագրելով, այլ գործողության մեջ:

- «Սասունցի Դավթին» թարմություն և գույն են տալիս բազմաթիվ գեղեցիկ յերգերը, վորոնցով առանձնապես հարուստ եղեղի Դավթի ճյուղը և մասնավորապես Խանդութի բաժինը:

Յերգով ե ասվում, նախ և առաջ, վեպի նախերդանքը կամ ինչպես ժողովուրդն և ասում «վողորմիսը»: Այնուհետեւ, յերգ և Մորա Մելիքի զորահավաքի կոչը: Յերգով են ասվում Ձենով Հովանի ափսոսանքը և Դավթի վախը թշնամու բազմամարդ բանակի հանդեպ: Յերգեր են՝ Դավթի դիմումնախազգուշացումը ուղղված Մելիքի բանակին, Խանդութ Խանումի գովքը, վորանում են Դավթի առաջ աշուղները, Դավթի ու Համբովի յերկախոսությունը: Յերգով և Խանդութը նախատում Պարոն Աստղիկին Դավթի գլուխ կրակ թափելու համար կամ միջամտում հոր և փորդու (Դավթի և Փոքր Մհերի) կովին: Յերգով և Մհերը դիմում իր մեռած ծնողների գերեզմանին պատմելով նրանց իր վիճակի մասին և այլն և այլն:

Նմուշի համար մեջ բերենք այդ յերգերից յերկուսը.

«Մարա Մելիքի գարահուպաբը

«Մարա Մելիք զդալալ եքից քաղաք,
Կանչեց ասքար ժողվելու, ասաց.

Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Նորալուկ մանուկ (Եր).

Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Լա բեղդար տղա (Եր).

Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Լա թուխ մորու (Եր).

Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Սըլվտակ մորու (Եր):

Ա. 17

Դավթի՝ քօնամիների բանակին իմաց տալը

«Վով քնիր եք՝ հարթուն կացեք,

Ախ հալա, արթուն կացեք.

Վով արթուն եք՝ ելեք կայնեցեք,

Ախ հալա, ելեք կայնեցեք.

Վով կայներ եք՝ ձեր զինքեր կապեցեք,

Ախ հալա, գենքեր կապեցեք.
 Վով ձեր զենքեր կապեր եք, ձեր ձիանք թամքեցեք.
 Ախ հալա, ձեր ձիանք թամքեցեք.
 Վով ձեր ձիանք թամքեր եք՝ ելեք հեծեցեք.
 Ախ հալա, ելեք հեծեցեք.
 Զասեր՝ Դավիթ դող եկավ, դող գնաց»:

Ա. 24

Վերջին հանգամանքը, վոր անհրաժեշտ են նշել «Սասունցի Դավիթի» արվեստի մասին խոսելիս՝ դա նրա տաղաչափական կառուցվածքն է: Մյուս արտահայտչական միջոցների նման մեր վեպի վոտանավորը ևս միանգամայն համապատասխանում են նրա բովանդակությանը: Դա մի աղատ, հանդարտ ու հանդիսավոր չափ է, վոր հիանալի կերպով դրսելորում ե վեպի հերոսական-գյուղագնական բովանդակությունը: «Սասունցի Դավիթի» պատումների մեծ մասը վոտանավոր է, յամբական պարզունյա ազատ վոտանավոր անապեստի խառնուրդով և անապեստյան ազատ վոտանավոր յամբի խառնուրդով: Այդ վոտանավորները սովորաբար միջյանց հետ խառը գործ են ածվում անխափի, բայց իրենց թվով իշխող մնում են յամբական առղերը: Հաճախ դրանց հետ միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապեստյան առղեր¹:

* * *

«Սասունցի Դավիթ»-ը հայ ժողովրդի անմահ ստեղծագործությունն է: Նրա մեջ մեծ պայմանությամբ ու թափով արցահայտված են մեր ժողովրդի աղատասիրական վողին ու հերոսությունը, նրա անդուռ պայքարը ոտարերկրյա նվաճողների դեմ:

Դավիթի հայրենասիրությունը, սերը գեպի ժողովուրդը, անսասան կամքը, խիզախությունը, քաջությունը այսոր ել հուզում են մեզ:

«Սասունցի Դավիթ»-ն իր խորը գեմոլրատիզմով և գեղարվանական բարձր արժանիքներով հանդիսանում է աշխարհի լավագույն եպոսներից մեկը»:

1) Տես Ա. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափությունը, Ցերեան
1933 թ. էջ 360—370:


ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220031911

(204)

ԳՐԱՅԻ 2 ԱՊԻՒՐԻ



Ա. ՂԱՎԱԼԱՆՅԻ

ДАВИД САСУНСКИЙ

Лекция прочитанная в лекториуме
Ереванск. Госунта 18-го декабря 1938 г.

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАНСКОГО ГОСУНТА